2025, ՄԱՅԻՍ Ա, ԹԻՎ 9 (677)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հաղթանակի և խաղաղության տոնի առիթով

Սիրելի՛ ժողովուրդ ի հայրենիս և ի սփյուռս,

Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի հոբելյանական 80-ամյակը և Շուշիի ազատագրման ու Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձները նշում ենք մեր ժողովրդի համար թանկ ու կարևոր հիշատակներով:

Յուրաքանչյուր հաղթանակ ձեռք է բերվում հավատքով, անդուլ մաքառումով և փորձությունների դիմակայումով: Բազմադարյա մեր պատմության ընթացքում մեր ժողովուրդն անձնազոհաբար պայքարել է իր անկախ և արժանապատիվ կյանքի համար՝ մշտապես ձգտելով արդարության ու խաղաղության հաստատման: Այս գիտակցությամբ են հարյուր հազարավոր հայորդիներ Խորհրդային Միության այլ ժողովուրդների հետ մարտնչել ընդդեմ ֆաշիզմի, հանուն ապահով ու բարօր աշխարհի հաստատման: Այս նույն գիտակցությամբ է ազգս նաև պաշտպանել արցախահայության՝ հարազատ հողում անկախ ու անվտանգ ապրելու իրավունքը:

Սիրելինե՛ր, այսօր էլ մեր ազգին ու հայրենիքին պատուհասած արհավիրքների՝ Արցախի հայաթափման, Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների հանդիման մենք պիտի աննկուն մնանք մեր ոգու արիությամբ, հավատքի ամրությամբ, լուսավոր ապագայի տեսիլքով և միշտ հիշենք, որ նշանակալի հաղթանակներ կերտել ենք միայն միասնականությամբ, հայրենիքի հանդեպ սիրով ու նվիրվածությամբ: Արդ, խոնարհում բերելով մեր հերոսների անմար հիշատակի առջև՝ ներշնչվենք նրանց պայծառ օրինակով և համատեղ ջանքերով ու միմյանց սատարումով շենացնենք մեր կյանքի անդաստանը նոր ձեռքբերումներով և ազգաշահ իրագործումներով:

Հաղթանակի և խաղաղության տոնի առիթով Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը և շնորհավորանքն ենք հղում Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան պատերազմի մասնակիցներին և աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդին:

Աղոթք ենք բարձրացնում աշխարհի խաղաղության, մեր հայրենիքի ու ժողովրդի անվտանգ, ապահով ու բարօր կյանքի համար և հայցում Բարձրյալից, որ այլևս մարդկային կյանքում տեղ չգտնեն ֆաշիզմի սոսկալի դրսևորումները, աղետալի պատերազմներ ու արհավիրքներ: Թող հարուցյալ Տիրոջ շնորհներն ու օրհնությունը լինեն մեզ հետ այսօր և միշտ և հավիտյանս. ամեն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց «Հաղթանակ» զբոսայգի

Մայիսի 9-ին՝ Հաղթանակի ու խաղաղության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց «Հաղթանակ» զբոսայգի՝ իր հարգանքի տուրքը մատուցելու Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան հերոսամարտերում զոհվածների անմար հիշատակին:

Անհայտ զինվորի հուշակոթողի մոտ ծաղկեպսակի զետեղումից հետո Վեհափառ Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված հայրենիքի համար իրենց կյանքն ընծայաբերած քաջորդիների հոգիների հանգստության և խաղաղության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Հռոմի նորընտիր Սրբազան Քահանայապետին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Հռոմի նորընտիր Սրբազան Քահանայապետ Լևոն 14-րդ Պապին:

Վեհափառ Հայրապետի շնորհավորական նամակում մասնավորապես ասվում է. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր դասի, հավատացյալների և Ամենայն Հայոց Հայրապետիս անունից հղում ենք Մեր աղոթական լավագույն բարեմաղթանքները Ձեզ՝ աշխարհի չորս ծագերում ապրող միլիոնավոր կաթոլիկ հավատացյալներին հովվելու բարձր ու պատասխանատու առաքելությունը ստանձնելու առթիվ:

Ձեր առաքելական ծառայության այս նոր հանգրվանում աղոթում ենք, որ Աստված ուժ և շնորհ պարգևի Ձերդ Սրբությանը՝ ճշմարտությամբ ու գթասրտությամբ առաջնորդելու Կաթոլիկ Եկեղեցին և խաղաղության, արդարության ու հոգևոր նորոգության կարոտ ներկա աշխարհում մշտարթուն վկայելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանը:

Գոհություն և փառք ենք մատուցում Տիրոջը մեր երկու քույր եկեղեցիների միջև շարունակվող քրիստոնեական սիրո ամուր կապի ու հարաբերությունների համար, որոնք վերջին տասնամյակներում զորացել են փոխադարձ հարգանքի, եղբայրական հանդիպումների և ընդհանուր վկայությունների շնորհիվ»:

Նորին Սրբությունը մաղթել է Սրբազան Քահանայապետին քաջառողջ երկար տարիներ և հոգևոր անսպառ զորություն՝ առաջնորդելու Աստծո կողմից իրեն վստահված հավատավոր հոտին:

Կատարվեց քահանայական ձեռնադրություն

Մայիսի 4-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում հընթացս Սուրբ Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն:



Պատարագիչն էր Գեղարքունիքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարթև եպիսկոպոս Բարսեղյանը, որի ձեռամբ քահանայական ձեռնադրության և օծման արժանացան Մայր Աթոռի տարբեր կառույցներում և թեմերում սպասավորող յոթ սարկավագներ:

Սուրբ Պատարագի ընթացքում Պարթև Սրբազանը, քահանայության կոչելով նորընծաներին, Սրբալույս Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը, ինչպես նաև նորաօծ եկեղեցականներին շնորհեց նոր հոգևոր անուններ:

Բարեշնորհ Հովհաննես սարկավագ Ասատրյանը վերակոչվեց Տեր Սեպուհ քահանա, Հարություն սարկավագ Մարտիրոսյանը՝ Տեր Առեն քահանա, Հավհաննես սարկավագ Փահլևանյանը՝ Տեր Եղիա քահանա, Մկրտիչ սարկավագ Տեր-Մկրտչյանը՝ Տեր Մաղաքիա քահանա, Եփրեմ սարկավագ Եփրեմյանը՝ Տեր Մխիթար քահանա, Տիգրան սարկավագ Հակոբյանը՝ Տեր Հովսեփ քահանա և Մայիս սարկավագ Կարապետյանը՝ Տեր Վազգեն քահանա:

Այնուհետև նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին: ➥ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Մայիսի 4-ին **Մարսելի քաղաքապետի գլխավորած պատվիրակությանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Մարսել քաղաքի քաղաքապետ Բենուա Պայանի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին քաղաքային իշխանության և հայ համայնքի ներկայացուցիչներ:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ պատվիրակության այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հայ ժողովրդի համար այս բարդ ժամանակներում ևս մեկ դրսևորումն է հայ-ֆրանսիական բարեկամության և Ֆրանսիայի իշխանությունների կողմից ցուցաբերվող զորակցության:

Հանդիպմանը Հայոց Հայրապետն անդրադարձավ Մարսելի քաղաքային իշխանության և հայ համայնքի սերտ գործակցությանը՝ գոհունակությամբ արձանագրելով, որ Հայոց ցեղասպանությունը վերապրած մեծ թվով հայորդիներ ապաստան են գտել նաև Մարսել քաղաքում, որտեղ և կազմակերպել են իրենց ազգային-հոգևոր կյանքը՝ օգտակար ներդրում բերելով երկրի առաջընթացին:

Իր հերթին Մարսելի քաղաքապետ Բենուա Պայանը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը ընդունելության համար, անդրադարձավ հայ-ֆրանսիական պատմական առնչակցություններին, կարևորեց տեղի հայ համայնքի և ազգային կազմակերպությունների ներդրումն ու շարունակական ներգրավվածությունը քաղաքի զարգացման գործում: Քաղաքապետ Պայանը նաև հավաստիացրեց Հայոց Հովվապետին, որ անհրաժեշտ ջանքերը կգործադրվեն հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ:

Մայիսի 7-ին **ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց դեսպանին Հայաստանում իրականացրած առաքելության համար՝ վստահություն հայտնելով, որ իր հետագա ծառայության մեջ պիտի շարունակի ջանքեր ներդնել հանուն հայ-բելառուսական հարաբերությունների առավել զորացման:

Իր հերթին Ալեքսանդր Կոնյուկն անդրադարձավ պաշտոնավարման տարիների իր ջերմ տպավորություններին և հետագա ծրագրերին:

Մայիսի 10-ին **Դատավորների եվրոպական միության տարեկան համաժողովի մասնակիցներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Դատավորների եվրոպական միության (EAJ) տարեկան համաժողովի մասնակիցներին:

ՀՀ դատավորների միության նախագահ Ալեքսանդր Ազարյանը, հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, ներկայացրեց համաժողովին մասնակից շուրջ 35 եվրոպական երկրից Հայաստան ժամանած պատվիրակներին և տեղեկություններ փոխանցեց համաժողովի աշխատանքների մասին:

Այնուհետև հյուրերին իր հայրապետական օրհնությունն ու պատգամը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին նրանց այցի առիթով:

Հայոց Հայրապետն իր խոսքում անդրադարձավ դատավորի կարևոր առաքելությանը աշխարհում արդարության հաստատման, մարդու իրավունքների ու ազատության պաշտպանության գործում՝ կարևորելով արդարադատության բարոյահենք համակարգի ամրապնդումը: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը պատգամեց դատավորներին՝ իրենց ծառայության ընթացքում ուղենիշ դարձնել ավետարանական ճշմարտությունը, որ իրական արդարությունը բխում է առ Աստված հավատքից և դրսևորվում է սիրով:

Խոսելով հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների մասին՝ Նորին Սրբությունը կարևորեց միջազգային դատական հանրության անդրադարձը բռնի տեղահանված արցախահայերի արդար իրավունքների պաշտպանությանը, Ադրբեջանի կողմից գերեվարված հայորդիների նկատմամբ իրականացվող շինծու դատավարությանը, ինչպես նաև Արցախի հոգևոր, մշակութային ժառանգության ոչնչացման և յուրացման գործողություններին:

Կատարվեց քահանայական ձեռնադրություն

➥ էջ 1

Սրբազան Հայրը, իր քարոզում անդրադառնալով քահանայության խորհրդին և դիմելով ներկա հավատացյալներին, նշեց. «Այսօր՝ Կանաչ (Աշխարհամատրան) կիրակիին, որը հիշատակն է Քրիստոսի Եկեղեցու հաստատման, Հայոց հոգևոր կենտրոնում՝ Միածնաէջ Մայր Տաճարի սրբազան Խորանին կատարեցինք ձեռնադրությունը յոթ սարկավագների: Սա Եկեղեցու պտղաբերության խորհուրդն է: Եվ ահա, սիրելիներ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, համալրվելով յոթ նոր մշակներով, նոր գարուն է ապրում»:

Անդրադարձ կատարելով հոգևոր ծառայության ընթացքում առկա փորձություններին ու դժվարություններին՝ Սրբազան Հայրը պատգամեց չխուսափել դժվարություններից, քանի որ դժվարությունների մեջ են դրսևորվում անձի լավագույն որակները:

Դիմելով նորաօծ հոգևորականներին՝ Սրբազան Հայրը հորդորեց բոլորանվեր ծառայել Եկեղեցու անդաստանում, հավատարիմ մնալ երանյալ հայրերի սուրբ ավանդներին, ժողովրդին ապրեցնել աստվածադիր պատվիրաններով, որպեսզի հոգևոր արժեքների ծաղկումով մեր ազգը կարողանա կյանքի կոչել իր երազներն ու իղձերը և կերտել նոր հաղթանակներ. «Ձեր ծառայության մեջ մշտապես ունեցեք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի օրինակը՝ բարի վարքով օրինակ ծառայելով մեր ժողովրդին: Հաստատուն և աներեր մնացեք ձեր առաքելության մեջ՝ հավատացյալների կյանքում առատացնելով սիրո, համերաշխության հանդուրժողականության և միաբանության շնորհները: Թող ձեր քահանայագործությունը պտղալից լինի ազգային-եկեղեցական անդաստանում՝ ի զորացումն մեր երկրի և ի պայծառություն տիրախնամ մեր թեմերի ու Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու»:

Ապա «Ողջույնի» ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբաններն ու ներկա հոգևորականաց դասը բարձրացան Սուրբ Խորան և շնորհավորեցին նորաօծ քահանաներին՝ համբուրելով նրանց մյուռոնադրոշմ ճակատներն ու ձեռքերը:

Նույն օրը՝ երեկոյան, Մայր Տաճարում կատարվեց նաև վեղարի տվչության արարողությունը: Տեր Սեպուհ, Տեր Մաղաքիա, Տեր Մխիթար, Տեր Հովսեփ, Տեր Վազգեն քահանաները ստացան վեղարներ ու համալրեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերը:

Այնուհետև նորաօծ եկեղեցականներին ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ վերջիններիս փոխանցելով իր հայրական օրհնությունն ու պատգամները:

Նորաօծ քահանաները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանցկացնեն քառասնօրյա պատրաստության և աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում և թեմերում:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Կիրակոսյանը սույն թվականի մայիսի 12-ից նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդյաց տների հոգևոր տեսուչ՝ ազատվելով Լուսարարապետի պաշտոնակատարի պարտականություններից:

Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրյանը սույն թվականի մայիսի 12-ից նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ՝ ազատվելով ԱՄՆ հայոց Արևմտյան թեմում ստանձնած հոգևոր ծառայությունից:

Հոգեշնորհ Տ. Ռուբեն վարդապետ Զարգարյանը ս. թ. մայիսի 15-ից նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն՝ ազատվելով Քրեակատարողական հիմնարկների հոգևոր տեսչի պարտականություններից:

Հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Պողոսյանը ս. թ. մայիսի 15-ից նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրեակատարողական հիմնարկների հոգևոր տեսուչ՝ ազատվելով Սուրբ Խոր Վիրապ վանքի վանահոր պարտականություններից:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

«Ձեր պատմությունը և ձեր սիրելի ժողովրդի հետ կատարված իրադարձություններն առաջացնում են իմ մեջ հիացմունք և վիշտ»

Ի հիշատակ Ֆրանցիսկոս Պապի

Ֆրանցիսկոս Պապը (ավազանի անունով՝ Խորխե Մարիո Բերգոլիո) Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու 266-րդ առաջնորդն էր: Նրա պապական անունը դրվել է՝ ի պատիվ Ֆրանցիսկյան միաբանության հիմնադիր Ֆրանցիսկ Ասիզեցու: Նա առաջին ճիզվիտ՝ Հիսուսի միաբանության անդամ պապն էր, առաջինը նաև, որ ընտրվեց Նոր աշխարհից՝ Լատինական Ամերիկայից, Գրիգոր III-ից (7–8-րդ դար) հետո ոչեվրոպացի առաջին պապը:

Խորխե Մարիո Բերգոլիոն ծնվել է 1936 թ. դեկտեմբերի 17-ին Արգենտինայի Բուենոս Այրես քաղաքի մոտ գտնվող Ֆլորենս բնակավայրում: Ճեմարան ընդունվելուց առաջ աշխատել է որպես և՛ քիմիական տեխնոլոգ, որի ուղղությամբ մասնագիտացած էր, և՛ գիշերային ակումբի դռնապան: Ծնողները եղել են իտալացի ներգաղթյալ հաշվապահ Մարիո Խոսե Բերգոլիոն և բուենոսայրեսցի տնային տնտեսուհի Ռեգինա Մարիա Սիվորին: Խորխեն եղել է ընտանիքի հինգ զավակներից ավագը: 21 տարեկանում Բերգոլիոն տառապել է կյանքի համար վտանգավոր թոքաբորբով: Հիվանդությունից հետո նրա թոքի մի մասը հեռացրել են: Երիտասարդության տարիներին Բերգոլիոն Սան Լորենցո դե Ալմագրո ֆուտբոլային ակումբի երկրպագուներից էր: Բերգոլիոն նաև Տիտա Մերելլոյի մասնակցությամբ ֆիլմերի, նեոռեալիզմի, տանգոյի և Արգենտինայի, Ուրուգվայի ազգային երաժշտության՝ միլոնգայի սիրահար էր:

Հոգևոր կյանք մուտք է գործել 1969 թվականին՝ ձեռնադրվելով քահանա, ապա նշանակվել է Արգենտինայի մայրաքաղաքում գտնվող Սան Միգել քոլեջի աստվածաբանական ֆակուլտետի պրոֆեսոր: 1970-ական թթ. տարբեր պաշտոններ է զբաղեցրել Արգենտինայի ճիզվիտական միաբանությունում: 1980 թ. նշանակվել է իր Ալմա մատերի՝ Սուրբ Հովսեփի ճեմարանի ռեկտոր և այդ պաշտոնը զբաղեցրել մինչ 1986 թ.: Գերմանիայում դոկտորական ատենախոսությունը պաշտպանելուց հետո վերադարձել է հայրենիք ու սկսել Կորդովայի արքեպիսկոպոսությունում պաշտոնավարել որպես խոստովանահայր և թեմի հոգևոր տնօրեն: 1998 թ. դարձել է Բուենոս Այրեսի արքեպիսկոպոս:

Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի կողմից Վատիկանում 2001 թ. փետրվարի 21-ին անցկացված Կոնսիստորիումի (Կաթոլիկ Եկեղեցու հոգևոր խորհուրդ) ժամանակ արժանացել է կարդինալական աստիճանի՝ Սուրբ Ռոբերտ Բելլարմինի եկեղեցու տիտղոսով: Կարդինալը Հռոմի Պապից հետո բարձրագույն տիտղոսն է Կաթոլիկ Եկեղեցու աստիճանակարգում: Կարդինալի տիտղոսը շնորհում է պապը, իսկ 1179 թվականից, Լաթերանի ժողովի որոշմամբ, կարդինալներն իրենց միջից ընտրում են պապին:

2005 թվականին՝ Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի մահից հետո, Բերգոլիոն կանչվեց Վատիկան՝ պապական կոնկլավին (պապի մահվանից 10 օր հետո հավաքվող կարդինալների հավաք) որպես կարդինալ-ընտրող մասնակցելու համար: Չնայած Բերգոլիոն դիտարկվում էր որպես պապի հավանական թեկնածու՝ պապաբիլ, կոնկլավն այնուամենայնիվ նոր պապ ընտրեց Բենեդիկտոս XVI-ին՝ կարդինալ Յոզեֆ Ռատցինգերին: Մինչ կոնկլավը կարդինալ Բերգոլիոն մասնակցեց Հովհաննես Պողոս II-ի թաղման արարողությանը և կարդինալների կոլեգիայի հետ գործեց որպես գահապահ՝ կառավարելով պապական աթոռը և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին «Sede Vacante» միջգահական շրջանում (լատ.՝ «թափուր գահի ժամանակ»): 2005 թ. նոյեմբերի 8-ին եռամյա ժամկետով գլխավորեց Արգենտինայի եպիսկոպոսների համաժողովը:

Կարդինալ Բերգոլիոն կոչ էր անում հոգևորականներին և աշխարհիկ հավատացյալներին՝ դեմ դուրս գալ վիժումներին ու էվթանազիային՝ ցավերից և տառապանքից ազատելու համար կյանքից զրկելուն: Նա հաստատակամորեն դեմ էր արտահայտվում նաև 2010 թ. Արգենտինայի կառավարության կողմից հաստատված միասեռ ամուսնությունները թույլատրող օրենսդրությանը: Բուենոս Այրեսի եկեղեցիներին ուղղված նամակում կարդինալ Բերգոլիոն գրում էր. «Եկեք միամիտ չլինենք, մենք չենք խոսում սովորական քաղաքական պայքարի մասին, սրանք ավերիչ մղումներ են՝ ընդդեմ Աստծո ծրագրի: Մենք չենք խոսում սովորական օրինագծի մասին, այլ, ավելի ճիշտ, զեղծարարության՝ ստի հոր մասին, որը ձգտում է մոլորեցնել ու խաբել Աստծո զավակներին»: 2013 թ. հուլիսին տված հարցազրույցում արդեն որպես պապ՝ հայտարարում է. «Եթե մարդը միասեռական է և ունի բարի կամք և ձգտում է դեպի Աստված, ապա ո՞վ եմ ես, որ դատապարտեմ նրան»: Հղում կատարելով Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու դոկտրինին՝ նա նշում է, որ միասեռականները «չպետք է դառնան լուսանցքներ, այլ պետք է ներառվեն հասարակության մեջ»:

Քննադատելով արտամուսնությունից ծնված երեխաներին մկրտել չցանկացող հոգևորականներին՝ կարդինալ եղած ժամանակ նա պնդում էր, որ չամուսնացած մայրերը ճիշտ են վարվել՝ լույս աշխարհ բերելով երեխային, ոչ թե նախընտրելով վիժումը, և Եկեղեցին չպետք է երես թեքի նրանցից. «Մեր եկեղեցական միջավայրում կան որոշ հոգևորականներ, որոնք չեն ցանկանում մկրտել միայնակ մայրերի երեխաներին, որովհետև այդ երեխաները չեն ծնվել սուրբ ամուսնությունից: Դրանք ժամանակակից փարիսեցիներ են: Նրանք են, ովքեր կղերականացնում են եկեղեցին, նրանք են, ովքեր ուզում են Աստծո ժողովրդին բաժանել փրկությունից: Իսկ խեղճ աղջիկը, որը, երեխային ուղարկողին վերադարձնելու փոխարեն, խիզախություն է ունեցել լույս աշխարհ բերել, ստիպված է մի ծխից մյուսն անցնել, որպեսզի մկրտի նրան»:

Բենեդիկտոս XVI Պապի հրաժարականից հետո՝ 2013 թ. մարտի 13-ին, կոնկլավի կողմից ընտրվեց պապ: Իր զինանշանի համար Ֆրանցիսկոս Պապը կարգախոս հռչակեց «Miserando atque eligendo»՝ «Գթառատ սիրով» տողերը՝ Մատթեոսի Ավետարանից և 7–8-րդ դդ. անգլիացի պատմիչ, աստվածաբան, Կաթոլիկ Եկեղեցու սուրբ Բեդա Պատվելու 21-րդ քահանայի ընտրությունը: «Դա նշանակում է՝ չձգտել երկրային իրերին, չփնտրել վաղանցիկ շահ, խուսափել չնչին մեծարանքից, խոնարհությամբ ընդունել աշխարհի բոլոր քամահրանքները՝ հանուն երկնային հռչակի, օգտակար լինել բոլորին, սիրել վիրավորանքները և ոչ մեկին չհակադարձել, համբերատարությամբ տանել բոլոր ստացված վիրավորանքները, միշտ փնտրել Արարչի փառքը և ոչ երբեք սեփականը: Ապրել այս ամենի և նմանատիպ այլ բաների հետ՝ նշանակում է գնալ Քրիստոսի հետքերով»:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը և Ֆրանցիսկոս Պապը Ծիծեռնակաբերդում, 2015 թ.

Ֆրանցիսկոս Պապը եղել է շատ հոգատար և հանդուրժող տարբեր դավանանքի մարդկանց հանդեպ, մշտապես կարևորել է Աստծո ողորմածությունը, հոգացել աղքատների համար: Իր պաշտոնավարման ընթացքում նա աչքի է ընկել համեստությամբ, պապական իշխանության նկատմամբ քիչ պաշտոնական վերաբերմունքով: Ի տարբերություն նախորդ պապերի՝ նա նախընտրում էր կրել անպաճույճ եկեղեցական հագուստներ, Վատիկանի առաքելական պալատի պապական հարկաբաժնում մնալու փոխարեն՝ բնակվում էր Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարին կից «Domus Sanctae Marthae» («Սուրբ Մարթայի տուն») հյուրատանը, իր ընտրության ժամանակ անգամ հրաժարվել է ավանդական պապական մոցցետայից, ոսկե Ձկնորսի մատանու փոխարեն (նաև կոչվում է պապական, հայրապետական կամ սուրբ Պետրոսի մատանի) կրում էր արծաթե մատանին և պահպանում էր կարդինալ ժամանակ կրած լանջախաչը: Ֆրանցիսկոսը, շեղվելով իր նախորդների վերամբարձ ու ակադեմիական կեցվածքով պաշտոնավարումից, փաստացի գլխավորում էր մի շարժում, որի նպատակն էր՝ առաջնահերթություն տալ կարիքավորներին՝ եկեղեցին կարծես դարձնելով այսպես կոչված «դաշտային հիվանդանոց»:

Հռոմի 266-րդ Պապը սիրված էր հավատացյալների կողմից, բայց նրա պաշտոնավարումը դրամատիկ ու հիասթափեցնող էր պահպանողականների և առաջադեմ խավերի համար: Ընդդիմախոսների կարծիքով՝ նա բավարար քայլեր չարեց Կաթոլիկ Եկեղեցու ներսում արատավոր բարքերը վերացնելու համար՝ ֆինանսական յուրացումներից մինչև սեռական ոտնձգություններ, թեև հենց նրա պաշտոնավարման օրոք Վատիկանի բանկն իր ողջ պատմության ընթացքում առաջին անգամ հրապարակեց ֆինանսական գործունեության մասին տարեկան զեկույց: Ֆրանցիսկոս Պապին հաջողվել է նաև Եկեղեցու հազարամյա համակարգում փոփոխություններ մտցնել՝ Վատիկանում բարձր պաշտոններ զբաղեցնելու իրավունք շնորհելով կանանց: 2016 թվականից ի վեր աստվածաբանական պահպանողականների կողմից Ֆրանցիսկոսի դեմ քննադատությունը սրվել էր: Ոմանք անհամաձայնության մակարդակը բացատրել են նրանով, որ նա տեսական սկզբունքներից անցել է հովվական ըմբռնման:

Հռոմի Ֆրանցիսկոս Պապը մահացել է 88 տարեկանում՝ ս. թ. ապրիլի 21-ին (Զատկի երկուշաբթի), իր նստավայրում՝ Վատիկանի Սուրբ Մարթայի տանը: Մահը վրա է հասել հինգ շաբաթ հիվանդանոցում մնալուց հետո, որտեղ նա բուժվում էր շնչուղիների վարակից և երկկողմանի թոքաբորբից: 2022 թվականից նա տեղաշարժվում էր անվասայլակով՝ ծնկի մշտական ցավի պատճառով, որ վիրահատություն էր պահանջում:

Պապական հուղարկավորությունն ավանդույթով ամրագրված բարդ իրադարձություն էր, բայց Ֆրանցիսկոս Պապի օրոք պարզեցվեցին ծեսերը: Նա ընտրեց պարզ, ցինկով պատված փայտե դագաղ և իր ցանկության համաձայն՝ հուղարկավորվեց Սանտա Մարիա Մաջորե պապական բազիլիկում, որը Հռոմի չորս գլխավոր տաճարներից մեկն է, իսկ հուղարկավորության ծախսերը հոգաց անհայտ մի բարերար: Սանտա Մարիա Մաջորեում թաղված է Հռոմի յոթ նախկին քահանայապետ, բայց Ֆրանցիսկոս Պապն առաջինն է հարյուր տարվա ընթացքում, որ ընտրել է Վատիկանից դուրս հուղարկավորման այդ վայրը. այդտեղ թաղված վերջին պապը եղել է Լեո XIII-ը (1903 թ.):

Ըստ Վատիկանի հաղորդած տեղեկությունների՝ Ֆրանցիսկոս Պապի երկժամյա հուղարկավորության արարողությանը մասնակցել է շուրջ 150 000 մարդ, ներկա են եղել աշխարհի տասնյակ երկրների շուրջ հիսուն առաջնորդ ու պաշտոնյա: Պապի վերջին հրաժեշտի և հուղարկավորության արարողություններին մասնակցել է նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը՝ Մայր Աթոռի պատվիրակությամբ:

Հռոմի Ֆրանցիսկոս Պապը Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ ունեցել է ջերմ ու ակնածալից վերաբերմունք: 2015 թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Ֆրանցիսկոս Պապը մատուցել է Սուրբ Պատարագ և իր ելույթում առանձնանշել, որ հայերին պատահած ողբերգությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն է: 2016 թ. հունիսի 24–26-ը Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետն այցելել է Հայաստան: Այցից առաջ նա հետևյալ ուղերձն է հղել. «Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մի քանի օր անց ես մեծ ուրախությամբ կլինեմ ձեր մեջ՝ Հայաստանում: Այս պահից արդեն հրավիրում եմ ձեզ՝ աղոթելու այս առաքելական ճանապարհորդության համար: Աստծո օգնությամբ գալիս եմ ձեզ մոտ՝ իրականացնելու համար, ինչպես ճանապարհորդության կարգախոսն է ասում, «Այց առաջին քրիստոնյա երկիր»: Եվ գալիս եմ որպես ուխտագնաց՝ այս հոբելյանական տարում թաթախվելու ձեր ժողովրդի հնագույն իմաստության մեջ և ըմպելու ձեր ժայռե հավատքի աղբյուրից, ինչպես ձեր հայտնի փորագիր խաչքարերն են: Գալիս եմ դեպի Հայաստանի առեղծվածային բարձունքները՝ որպես եղբայր՝ մղված ձեր դեմքերը տեսնելու ցանկությունից, աղոթելու ձեզ հետ և կիսելու բարեկամության պարգևը: Ձեր պատմությունը և ձեր սիրելի ժողովրդի հետ կատարված իրադարձություններն առաջացնում են իմ մեջ հիացմունք և վիշտ: Հիացմունք, քանի որ Հիսուսի խաչի ու ձեր տաղանդավոր մտքի մեջ եք գտել կրկին ոտքի կանգնելու ուժը նույնիսկ ամենասարսափելի տառապանքներից հետո, որ պատմությունը կարող է հիշել: Վիշտ՝ այն ողբերգությունների համար, որոնք ձեր հայրերը կրել են իրենց մաշկի վրա: Թույլ չտանք ցավոտ հիշողություններին տիրանալու մեր սրտին: Նույնիսկ չարի շարունակական հարձակումներին չհանձնվենք: Գործենք, ինչպես Նոյը, որ ջրհեղեղից հետո չհոգնեց դեպի երկինք հայացք նետելուց և մի քանի անգամ աղավնի ուղարկեց, մինչև որ նա վերադարձավ ձիթենու մատղաշ տերևով: Դա նշան էր, որ կյանքը կարելի էր վերսկսել, և հույսը պետք է հարություն առներ.... Թող որ ձեր ժողովրդի մեծանուն սրբերը՝ մասնավորապես Եկեղեցու վարդապետ Գրիգոր Նարեկացին, օրհնեն մեր հանդիպումները, որոնց սպասում եմ վառ ցանկությամբ ....»:

Այցի շրջանակներում Ֆրանցիսկոս Պապը եղել է նաև Ծիծեռնակաբերդում՝ հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Այնուհետև գրառում է կատարել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պատվո այցելուների գրքում. «Այստեղ աղոթում եմ՝ ցավը սրտիս մեջ, որ այլևս երբեք նման ողբերգություններ, ինչպիսին սա է, չկրկնվեն, որ մարդկությունը չմոռանա և իմանա չարությանը բարությամբ հաղթել: Թող Աստված պարգևի սիրեցյալ հայ ժողովրդին և ամբողջ աշխարհին խաղաղություն և մխիթարություն: Աստված պահպանի հայ ժողովրդի հիշողությունը: Հիշողությունը չի կարելի ո՛չ պղտորել, ո՛չ մոռանալ: Հիշողությունը խաղաղության և ապագայի աղբյուրն է»: ➥ էջ 4

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կանաչ կիրակի. Եկեղեցու հիմնադրումը Հայաստանում

Սուրբ Հարությանը հաջորդող երրորդ կիրակին կոչվում է Աշխարհամատրան կիրակի՝ ի նշանավորումն Երուսաղեմի առաջին եկեղեցու հիմնադրման: *Աշխարհամատրան* բառը կամ *աշխարհամատուռը* նշանակում է աշխարհի առաջին մատուռը՝ Երուսաղեմի եկեղեցին՝ հիմնված առաքյալների կողմից: Տոնի ժողովրդական անվանումը Կանաչ կիրակի է՝ կապված գարնան և բնության վերազարթոնքի հետ: Կանաչ կիրակին խորհրդանշում է նաև կյանքի հարությունը:

Հայոց աշխարհում Քրիստոսի դավանանքը քարոզեցին Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները, որոնք և դարձան մեր ազգի առաջին լուսավորիչները՝ ցրելով հեթանոսական կռապաշտ խավարը և տարածելով Քրիստոսի անսպառ լույսը:

Ինչպես հայտնի է, Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները Հիսուս Քրիստոսի տասներկու առաքյալներից էին: Մեր Տիրոջ համբարձումից հետո Նրա առաքյալները շրջեցին աշխարհով մեկ՝ քարոզելու Ավետարանը, և նրանց քարոզչության շնորհիվ շատերը դարձի եկան, զինվորագրվեցին Քրիստոսի բանակին՝ մկրտվելով առաքյալների կողմից: Այդ քարոզչության արդյունքը եղավ քրիստոնեական առաջին համայնքների ձևավորումը, նրանք հաստատեցին նաև եպիսկոպոսական աթոռներ՝ հավատացյալ ժողովրդի խնամքը վերջիններիս հանձնելով:

Թադեոս առաքյալը Քրիստոսի համբարձումից հետո գնում է Եդեսիա՝ բժշկելու Աբգար թագավորին, որն ազգությամբ հայ էր: Ապա նա մկրտում է տեղի ժողովրդին, Ադդե անունով մետաքսագործին ձեռանադրում իբրև իր հաջորդ, իսկ Աբգար թագավորից հրովարտակ առնելով՝ ամենքին Քրիստոսի Ավետարանը քարոզելու, գալիս է նրա քեռորդի Սանատրուկի մոտ, և առաքյալի քարոզչությամբ թագավորն ընդունում է քրիստոնեություն: Սակայն շուտով, վախենալով իր նախարարների վրեժխնդրությունից, Սանատրուկը հրաժարվում է քրիստոնեությունից և Շավարշան գավառում (միջնադարում առավել հայտի էր Արտազ անունով) սպանել տալիս Թադեոս առաքյալին:

Հովնաթան Հովնաթանյան, Ս. Բարդուղիմեոս, Ս. Էջմիածնի գանձատուն, XVIII դ.

Ավանդության համաձայն՝ քարը պատռվում և ընդունում է նահատակ առաքյալի մարմինը: Հետագայում սրբի գերեզմանի վրա կառուցվում է Սուրբ Թադեոս վանքը: Նահատակվում է նաև Սանատրուկ արքայի դուստր Սանդուխտ կույսը, որը հրաժարվել էր քրիստոնեությունը թողնելու պարտադրանքից:

Թադեոս առաքյալը, նախքան նահատակությունը, Հայոց աշխարհի Արտազ գավառում հիմնել էր եպիսկոպոսական աթոռ և Զաքարիային ձեռնադրել եպիսկոպոս: Նա նաև եպիսկոպոսական աթոռներ էր հիմնել Սյունիքում՝ ձեռնադրելով Եվստաթեոսին:

Թադեոս առաքյալի՝ Մեծ Հայքում քարոզչության ժամանակային առաջնության պատճառով Հայոց Եկեղեցին համարվել է Սուրբ Թադեոսի առաքելական աթոռ:

Սուրբ Բարդուղիմեոս առաքյալը Հովհաննեսի Ավետարանում հիշատակվում է Նաթանայել անվամբ: Երբ Հիսուս տեսավ Իր մոտ եկող Նաթանայելին, նրա մասին ասաց. «Ահա իսկական մի իսրայելացի, որի մեջ նենգություն չկա» (Հովհ. 1:47): Եվ հենց Բարդուղիմեոսն էր, որ առաջինը Տիրոջն անվանեց Աստծո Որդի. «Ռաբբի, Դու ես Աստծու Որդին, Դու ես Իսրայելի թագավորը» (Հովհ. 1:49):

Բարդուղիմեոս առաքյալը Հայաստան քարոզելու է եկել Թադեոս առաքյալից հետո: Արտաշատ գնալիս նա մերձակա բլրի վրա՝ Օթյաց Խաչ կոչված վայրում, հանդիպում է Թադեոս առաքյալին: Հանդիպումից հետո Թադեոսը վերադառնում է Վասպուրական և Արտազ, իսկ Բարդուղիմեոսը՝ Հեր և Զարևանդ, այնուհետև՝ Անձևացյաց գավառ և Աղբակ: Այստեղ նրա քարոզչության շնորհիվ քրիստոնյա են դառնում Սանատրուկ արքայի քույրը՝ Ոգուհին, և Տերենտիոս հազարապետը: Արքայի հրամանով ձերբակալում են առաքյալին, արքայաքրոջն ու հազարապետին և բերում արքունիք: Երկարատև հարցաքննությունից հետո նրանք հրաժարվում են թողնել առ Քրիստոս հավատը: Բարդուղիմեոս առաքյալը նահատակվում է փշոտ քուքերի հարվածներից, իսկ արքայաքրոջը և հազարապետին սրակոտոր են անում:

Ավանդության համաձայն՝ Բարդուղիմեոս առաքյալը մորթազերծ է արվել: Առաքյալը նահատակվել է Վասպուրական նահանգի Աղբակ գավառում: Հետագայում նրա գերեզմանի վրա կառուցվել է Սուրբ Բարդուղիմեոս վանքը:

2015 թվականից, Ն. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով, Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների հիշատակության օրը հռչակվել է Աստվածամուխ Սուրբ Գեղարդի ուխտի օր: Տոնի օրը Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվում է Սուրբ Պատարագ, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը Սուրբ Գեղարդը եկեղեցական հանդիսավոր թափորով և ավետաբեր զանգերի հնչյունների ներքո բերում է Մայր Տաճար:

Սուրբ Գեղարդը, ինչպես հայտնի է, այն նիզակի սայրն է, որով հռոմեացի զինվորը խոցեց խաչին գամված մեր Տիրոջը. «Զինվորներից մեկը տեգով խոցեց Նրա կողը, և իսկույն արյուն ու ջուր ելավ» (Հովհ. 19:34): Ըստ եկեղեցական ավանդության՝ Սուրբ Գեղարդը Քրիստոսի համբարձումից հետո Հայոց աշխարհ է բերել Սուրբ Թադեոս առաքյալը: Հայոց Սանատրուկ թագավորի մոտ՝ Արտազ գնալիս, Տարոնի ճանապարհին, Սուրբ Հոգու թելադրմամբ առաքյալը եղրդենու տակ պահում է Աստվածամուխ Գեղարդն ու յուղով լի սրվակը: Սուրբ Գեղարդի միջոցով այդտեղ աղբյուր է բխեցնում, այնուհետև շարունակում է ճանապարհը դեպի Արտազ, ուր և նահատակվում է:



Անտոնիս վան Դեյք, Սուրբ Թադեոս, 1619—1621 թթ.

Սուրբ Գեղարդն ու յուղով լի սրվակը եղրդենու տակ պահված են մնում մինչև հայոց դարձը: Երբ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից կաթողիկոսական օծում ստանալուց հետո վերադառնում է Հայաստան, Տարոնում հիմնում է Մշո Սուրբ Կարապետ վանքը: Գրիգոր Լուսավորիչը տեսնում է մի լույս, որը կամարաձև իջնում է այնտեղ, ուր եղրդենու տակ ամփոփված էին յուղի սրվակն ու Սուրբ Գեղարդը:

Սուրբ Գեղարդը դարեր շարունակ պահվել է պատմական Հայաստանի տարբեր վանքերում: 13-րդ դարում այն Պռոշյան իշխանական տան սեփականությունն էր: Երկար ժամանակ էլ պահվում էր Այրիվանքում (Գեղարդավանք): 18-րդ դարի երկրորդ կեսին Սուրբ Գեղարդը բերվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և մինչև օրս համայն հայության հոգևոր կենտրոնում է:

Աստվածամուխ Սուրբ Գեղարդն ունի բժշկող զորություն: Սուրբ Գեղարդի հրաշագործությունների նկատմամբ հավատ են ունեցել ոչ միայն հայերը, այլև օտարազգիները՝ վրացիները, մահմեդականներ և այլն, ու մեծամեծ դժբախտությունների ժամանակ միշտ դիմել են նրա հրաշագործ զորությանը: 1797 թ., երբ Թիֆլիսում մոլեգնում էր ժանտախտը, վրաց Գեորգի թագավորը խնդրանքով դիմել է Ղուկաս Ա Կարեցի Հայրապետին՝ Գեղարդը Թիֆլիս տանելու թույլտվությամբ: Հայոց Հայրապետն ընդառաջում է վրաց թագավորի խնդրանքին և Գեղարդն ուղարկում Թիֆլիս: Ժանտախտը շուտով վերանում է: Հավատալով Գեղարդի հրաշագործ զորությանը՝ վրաց թագավորն ուզում էր ընդմիշտ սեփականացնել այն և տարիներ շարունակ չէր վերադարձնում: Ի վերջո այն էջմիածին վերադարձվեց մեծ ջանքերի գնով: Դա է պատճառը, որ երբ 1830 թ. ամռանը Թիֆլիսում բռնկված ժանտախտի ժամանակ թիֆլիսահայ համայնքը թախանձագին դիմեց Եփրեմ Ա Զորագեղցի Կաթողիկոսին՝ ժանտախտի դեմ պայքարելու արդեն փորձված միջոց Սուրբ Գեղարդն այնտեղ ուղարկելու, Կաթողիկոսը մերժողական պատասխան ուղարկեց:

1846—1847 թթ., երբ ժանտախտը կրկնվեց Անդրկովկասում, առիթ եղավ նորից խնդրելու Գեղարդը: Անդրկովկասի քաղաքական վարչության պետ գեներալ Լադինսկին 1846 թ. մարտի 2-ին նամակ-խնդրանքով դիմեց Ներսես Ե Աշտարակեցի Կաթողիկոսին, որ Գեղարդը էջմիածնից դուրս բերվի: Ի պատասխան նամակի՝ Վեհափառը Սուրբ Գեղարդը եպիսկոպոսների ու վարդապետների ուղեկցությամբ 1846 թ. պտտեցնում է Նախիջևանի և Երևանի գավառների գյուղերում, ապա 1847 թ. այն տարվում է Թիֆլիս ու նույն տարում էլ վերադարձվում Սուրբ Էջմիածին (տե՛ս Ի. Ղարիբյան, Հրաշագործ Սուրբ Գեղարդ, Երևան, 2003):

Հայոց Եկեղեցին Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների հիշատակությունը կատարում է Հիսնակաց պահքի երկրորդ կիրակիի նախորդ օրը՝ շաբաթ: Թադեոս առաքյալին նվիրված հիշատակության մեկ օր ևս կա՝ Սուրբ Սանդուխտ կույսի հետ, որ նշվում է Պայծառակերպության տոնի հաջորդ շաբաթ օրը:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

Ի հիշատակ Ֆրանցիսկոս Պապի

↩ էջ 3

Չնայած Ֆրանցիսկոս Պապի և Վատիկանի՝ Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ ունեցած ջերմ վերաբերմունքին՝ վերջերս հայության համար տարակուսանքի և խորին անհանգստության պատճառ դարձավ երկու իրողություն. նախ՝ Վատիկանի «L'Osservatore Romano» պաշտոնական պարբերականում 2024 թ. հուլիսին հրատարակվեց «Քրիստոնեության ակունքներն Ադրբեջանում. ալբանական առաքելական եկեղեցու հետքերով» վերտառությամբ հակագիտական հոդված, ուր Դադիվանքը, Գանձասարը և Խաթրավանքը համարվում էին ոչհայկական, ապա՝ Վատիկանում՝ Սուրբ Աթոռի հայրապետական Գրիգորյան համալսարանում, ս. թ. ապրիլի 10-ին Ադրբեջանի ԱԳՆ-ի կողմից կազմակերպվեց միջազգային գիտաժողով՝ «Քրիստոնեությունը Ադրբեջանում. պատմություն և արդի ժամանակներ» խորագրով, որը դարձյալ նպատակաուղղված էր Արցախի հայկական կրոնական ու մշակութային ժառանգությունն ադրբեջանական ներկայացնելուն՝ փաստացի հերքելով հայերի ներկայությունը տարածաշրջանում: Համաժողովի ելույթներում Արցախի մի շարք վանքեր ու եկեղեցիներ, այդ թվում՝ Դադիվանքի վանական համալիրը, ներկայացվել են որպես «հնագույն կովկասյան ալբանական մշակույթի ժառանգություն»: Սա Ադրբեջանի կողմից տարիներ շարունակ տարվող քաղաքականության հետևանք է, և խիստ դատապարտելի են գիտության անվան տակ պատմության կեղծումը, վերաշարադրումն ու քաղաքական նպատակներով օգտագործումը: Ադրբեջանական կեղծ թեզերը ներկայացրել են Թուրքիայից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Հարավային Կորեայից, Ռուսաստանից, Լեհաստանից, Իտալիայից, Վրաստանից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Կանադայից, ԱՄՆ-ից, Լիտվայից ժամանած գիտնականներ: Ի պատասխան Մայր Աթոռի պաշտոնական դատապարտման՝ Գրիգորյան համալսարանի ղեկավարությունը կատարվածի վերաբերյալ տեղեկացրել է, որ համալսարանը որևէ ներգրավվածություն չի ունեցել միջոցառման կազմակերպման գործում և ոչ էլ հովանավորչություն է իրականացրել, պարզապես «լսարանային տարածք է վարձակալությամբ տրամադրել»:



Ֆրանցիսկոս Պապը 2015 թ. ապրիլի 12-ին՝ Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պատարագի ժամանակ, տեղի ունեցածը բնորոշեց «ցեղասպանություն» եզրույթով:

Նշենք, որ շատ սերտ են Բաքվի և Վատիկանի փոխհարաբերությունները: Տակավին 2020 թ. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը և նրա տիկինը Վատիկանում Ֆրանցիսկոս Պապի կողմից ընդունվել են որպես հատուկ հյուրեր: Այցի ընթացքում Մեհրիբանը պարգևատրվել է նաև աշխարհիկ անձանց համար պապական ամենաբարձր պարգևով՝ Պիոս IX-ի շքանշանով:

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կարմիր կիրակի

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնին հաջորդող վեց կիրակիները կոչվում են Հինանց կիրակիներ կամ Գունագեղ կիրակիներ: Այդ կիրակիները Սուրբ Զատկի տոնին հաջորդող հիսուն օրվա հոգևոր ուրախության շրջանն են, որոնք շարունակում են Սուրբ Հարության վայելքն ու խորհուրդը: Առաջին կիրակին Կրկնազատիկն է, որին հաջորդում են Սպիտակ, Կանաչ, Կարմիր, Լուսապայծառ և Կապույտ կիրակիները: Յուրաքանչյուր կիրակիի անվան խորհրդաբանության հիմքում առկա գույնը գարնան իմաստաբանական մի երանգ է: Շնորհք Պատրիարքը, նկատի ունենալով այս հոգևոր ու առարկայական բազմերանգությունը, գրում է. «....Չկա մեկը, որ չհափշտակվի ծիածանի կամարով, չկա մեկը, որ կանգ չառնի և լուռ հիացմունքով կամ հրճվագին բացականչությամբ չդիտի դաշտերի մեջ հյուսված ծաղիկների գարնանային գույնզգույն կամ միագույն գորգերը: Վերջապես չկա աչք ունեցող հողեղեն մի էակ, որ չհրապուրվի արշալույսի կամ վերջալույսի գույների խաղերով» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, Մեծ Պահքի կիրակիների ոսկե շղթան, Գունագեղ կիրակիներ և Հոգեգալուստ, Ս. Էջմիածին, 2011, էջ 133):

Հինանց չորրորդ կիրակին Կարմիր կիրակին է, որն ունի մի քանի խորհուրդ և մեկնություն: Ժողովրդի շրջանում այն համարվել է նահատակաց կամ սրբոց կիրակի: Մեկ այլ բացատրությամբ՝ կարմիրը խորհրդանշում է Քրիստոսի կենարար արյունը՝ հեղված հանուն մարդկության մեղքերի քավության, և Նրա արյամբ հաստատված Եկեղեցին: Այն նաև խորհրդանիշն է բոլոր մարտիրոսների արյան, որոնք նահատակվել են Քրիստոսի և քրիստոնեական հավատքի համար:

Քրիստոնեության մեջ կարմիրն առհասարակ պայքարի խորհուրդն ունի: Բոլոր ժամանակների ռազմական մեծագույն հեղափոխությունները որպես խորհրդանշան են ունեցել կարմիր գույնը: Պատահական չէ նաև, որ քրիստոնեությունն իր Հարուցյալ Փրկչին պատկերել է կարմիր ձորձով և Նրա ձեռքին՝ կարմիր դրոշ՝ խաչի նշանով (Շնորհք Պատրիարք Գալուստյան, Մեծ Պահքի կիրակիների ոսկե շղթան...., էջ 157): Իսկ Եսայի մարգարեն կարմիրը համարել է հաղթանակի գույն. «Ո՞վ է սա, որ սուրալով է գալիս Եդովմից, որի զգեստները բոսորի կարմրությունն ունեն, գեղեցիկ պատմուճանով և հուժկու զորությամբ.... Ինչո՞ւ կարմիր են զգեստներդ հնձանահարի հանդերձների նման» (Եսայի ԿԳ:1–2):

Մեզանից յուրաքանչյուրը բազմապիսի փորձությունների և պայքարի միջով է անցնում՝ սեփական գոյությունը երկրային կյանքում պահելու համար: Սակայն ո՞րն է պայքարը, որ մարդը մղում է քրիստոնեական կյանքում: Արտաքուստ շատերին կարող է թվալ, որ քրիստոնյան միայն Ավետարան է կարդում և գնում եկեղեցի: Սակայն այդ պայքարն ունի ավելի խոր արմատներ: Սուրբ Մկրտության և Դրոշմի խորհրդով մարդը դառնում է քրիստոնյա, մուտք գործում հոգևոր նոր կյանք, որտեղ արդեն պետք է պայքարի չար, ապաբարոյական, այլասերիչ ուժերի դեմ, որոնք կարող են տանել դեպի կործանում: Իրական քրիստոնյան պետք է պատրաստ լինի պահելու բոլոր բարոյական և հոգևոր չափանիշները, պետք է լինի քաջ զինվոր, որն անգամ սեփական կյանքի գնով կարող է պաշտպանել իր հավատը: Նա պետք է հրաժարվի բնազդական նախասիրություններից, նախկին կյանքի ապականիչ հակումներից և մոլություններից: Այդ պայքարը բնավ էլ հեշտ չէ, պետք է դրսևորել ուժեղ կամք և տոկունություն՝ այդ ամենին հասնելու համար: Այսինքն՝ միայն ուժեղներին է պայքարը հասու: Սակայն Պողոս առաքյալն ասում է. «Աստծո «տկարը» ավելի հզոր է, քան մարդկանց կողմից «զորավոր» նկատվածները» (Ա Կորնթ. Ա:26–27): Իսկ Շնորհք Պատրիարքը նկատում է. «Երբեմն ուժի ինչպիսի առատ աղբյուրներ կան ըստ աշխարհի՝ տկար մարդկանց մեջ, և ինչ քայքայիչ տկարություն՝ զորավոր նկատված մարդկանց մեջ» (Շնորհք Պատրիարք Գալուստյան, Մեծ Պահքի կիրակիների..., էջ 160): Սրանով հասկանում ենք, որ յուրաքանչյուր մարդ կարող է ունենալ թուլություններ, բացասական հակումներ և սովորություններ, սակայն քրիստոնեության համար հարկավոր է ունենալ քաջություն և հրաժարվել չարից, կեղծիքից, ստից, անարդարությունից, բանսարկությունից և այն ամենից, ինչը կարող է մարել հոգևոր լույսը: Այդ քաջությունն իր մեջ կարող է գտնել ամեն ոք՝ հանուն քրիստոնեական հավատքի և աստվածային սիրո: Ինչպես բնությունն է ծաղկում ձմռան ցրտից և բազմաթիվ փորձություններ հաղթահարելուց հետո, այնպես էլ մարդկային կյանքն է ծաղկում Աստծու սիրո և Նրա հավատքի շնորհիվ: Եվ, ի վերջո, կարմիրը մեր Փրկչի հեղած արյունն է, որով Նա ուղենշեց այն «անձուկ ու նեղ ճանապարհը», որ յուրաքանչյուր քրիստոնյայի՝ իրական քրիստոնյայի, պետք է տանի դեպի հավիտենական կյանք, դեպի արդարության պսակ:

Կարմիր կիրակին ինքնահատուկ ոչ մի շարական չունի, որևէ հատուկ արարողություն բնորոշ չէ նրան, և չի տարբերվում մյուս կիրակիներից: Սակայն որոշ եկեղեցիներում պատարագչի զգեստը, եկեղեցու վարագույրն ու զարդարանքը, դպիրների և սպասավորների շապիկները օրվան համապատասխան՝ կարմիր են լինում: Հատկանշական է, որ Հինանց կիրակիներին ամբողջությամբ կարդացվում են չորս Ավետարանները՝ Հիսուսի Ծննդյան և Զարչարանքների դրվագներից բացի, ողջ «Գործք Առաքելոց»-ը և յոթ ընդհանրական նամակները՝ որպես Ս. Պատարագի ճաշու ընթերցումներ:

Գունագեղ կիրակիներն իրենց ուրույն ազդեցությունն են ունեցել հատկապես ժողովրդական սովորույթների և կյանքի վրա: Որպես առատության և արգասավորության խորհրդանիշ՝ հարսանիքների ժամանակ փեսայի վրա կապում էին կանաչ և կարմիր ժապավեններ: Նարոտի թագի փոխարեն կարմիր ու կանաչ էին օգտագործում: Այդ օրերին մարդիկ ուխտագնացություններ էին կազմակերպում մեծ շուքով և պատասխանատվությամբ: Նախապես պատրաստում էին բազմապիսի և տարատեսակ ուտեստներ, հատուկ հագուստներ ընտրում, զբոսանքներ կազմակերպում, որոնք ուղեկցվում էին ուրախ երգ ու պարով: Ժամանակին հեռավոր վայրերում ապրողներն օրեր առաջ էին գալիս, որ հասցնեին մասնակցել ուխտագնացությանը: Ուխտավայրերում այդ օրերին բազմաթիվ հին վեճեր էին լուծվում, նոր կապեր և բարեկամություններ էին հաստատվում, աղջկատեսություններ, խնամատեսություններ և նշանախոսություններ էին կատարվում: Ընդունված են եղել նաև բազմաթիվ խաղեր՝ հավկթախաղը, վեգախաղը, չլիկ դաստան և այլն:

Այսօր էլ որոշ բնակավայրերում այս ավանդույթները որոշակի փոփոխություններով պահպանվել են: Կանաչ և Կարմիր կիրակիների սիրված ուխտավայր է համարվում Կոտայքի մարզի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին:

Հայոց Եկեղեցին այս տարի Կարմիր կիրակին տոնեց մայիսի 11-ին: Շուրջ հինգ տարի է, ինչ ավանդույթ է դարձել, որ այդ օրերին Արագածոտնի թեմի Սուրբ Հովհաննավանք է տարվում Մշո Սուրբ Առաքելոց վանքի Կարմիր Ավետարանը, որը պատկանում է երևանաբնակ Կարապետյանների ընտանիքին, և այդ օրը մատուցվում է Սուրբ և Անմահ Պատարագ: Սա այն Ավետարանն է, որի վրա Անդրանիկ Զորավարն ու նրա զորքը երդվել են կյանքի գնով պաշտպանել հայրենիքը: Եվ նրանց օրինակով մեզանից յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի պաշտպանել մեր հայրենիքն ու հավատը:

Հինանց կիրակիների լուսապայծառ գույները հարկավոր են յուրաքանչյուր քրիստոնյայի, որ Աստծո հանդեպ սերն ու հավատը առավել գունեղ ու հրաշագեղ դարձնեն: Քրիստոնեությանը հարկավոր են գույներ...

Լիլիթ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ահարոնյան քահանայության հաստատումը. քահանայական զգեստներ և ձեռնադրություն

«Դուք կլինեք ինձ համար քահանաների թագավորություն և սուրբ ազգ: Այս ամենը հաղորդիր Իսրայելի որդիներին» (Ելք 19:6):

Քահանայությունը Հին Մերձավոր Արևելքում

Քահանայությունը՝ իբրև պաշտոն, տարածված է եղել Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր ժողովուրդների կրոնական համակարգերում: Քահանաները պատասխանատու էին տաճարներում ծառայելու, զոհաբերություններ կատարելու և պաշտամունքային արարողությունների ընթացքում հասարակ ժողովրդին առաջնորդելու համար: Այս պաշտոնն ստանձնելու նպատակով նրանք պատրաստվում էին դեռևս վաղ տարիքից, սակայն որոշ դեպքերում այն կարող էր լինել նաև ժառանգական: Պաշտամունքի բաղկացուցիչ մաս էին հատկապես ծիսական զոհաբերությունները, որոնք կարևոր նշանակություն են ունեցել տարբեր ժողովուրդների կյանքում: Դրանք զանազան իմաստներ ու նպատակներ են հետապնդել՝ սկսած որևէ աստվածության հաճոյանալու համար կերակուր մատուցելու պարզ ցանկությունից մինչև երախտագիտության կամ նվիրվածության մեծագույն զգացումի ցուցաբերում:

Իսրայելի հարևան տարածքներում, այդ թվում՝ Եգիպտոսում և Միջագետքում, որպես քահանաներ՝ սովորաբար հանդես էին գալիս թագավորները՝ շատ հաճախ նաև գլխավորելով քահանայական դասը: Նահապետական շրջանում, ի տարբերություն այլ ազգերի, հրեա ժողովրդի կյանքում քահանայական հատուկ պաշտոն գոյություն չուներ, և նահապետներն իրենք էին իրականացնում այնպիսի կարևոր գործառույթներ, որոնք բնորոշ էին քահանաներին (Ծնն. 8:20, 12:7, 13:4, 26:25): Նահապետական վարչաձևում կրոնական առաջնորդությունը նույնացվում էր քաղաքականի հետ: Նահապետը գործում էր՝ որպես ժողովրդի ընդհանուր նախահայր, դատավոր և կրոնական առաջնորդ: Արդեն իսկ ահարոնյան քահանայության հաստատմամբ այս ամենն ավելի կարգավոր տեսք ստացավ. քահանաների հիմնական գործառույթը, ծիսական զոհաբերություններ կատարելուց զատ, դարձավ Աստծո և մարդկանց միջև միջնորդ և Աստծո ժողովրդի ուսուցիչ ու դաստիարակ լինելը: Այս ամենը նրանց առանձնացնում էր ժողովրդի մնացյալ հատվածից:

Վկայության խորանին առնչվող կարգադրությունների հետ իբրև պաշտամունքային աստվածադիր կարգերի անբաժանելի մաս՝ ձևավորվեց Ահարոնյան քահանայությունը: Այսպես, Ելից գրքի 25:1–27:19 և 27:20–30:10 տեղիները բովանդակային առումով իրար համապատասխանող հատվածներ են, որոնցից առաջինը հիմնվում է մարդկանց բարի կամքի դրսևորման վրա, այն է՝ Վկայության խորան կառուցելու մասին միայն ակնարկելը կամ այդ գաղափարը հաղորդելը բավարար է, որ մնացյալ ամեն բան հրեա ժողովուրդը ձեռնարկի ինքնուրույն, իսկ երկրորդում, ի տարբերություն առաջինի, Աստծո կողմից արդեն իսկ տրվում են հստակ հրահանգներ Վկայության խորանի կառուցման վերաբերյալ: Առաջին հատվածում այն նախատեսված է այնպիսի մարդկանց համար, որոնք Աստծո հետ անմիջական շփման մեջ են (օրինակ՝ Մովսեսը), իսկ երկրորդում գործող և գլխավոր հերոսներ են դառնում քահանաները: Հետաքրքրական է, որ վերոնշյալ հատվածներում Մովսեսի անունը հիշատակվում է միայն մեկ անգամ՝ 25-րդ գլխի առաջին համարում. *«Տերը Մովսեսին ասաց»:* Այդուհետ գլխավոր դերում հանդես պիտի գա նրա եղբայր Ահարոնը:

27-րդ գլխում տեսնում ենք, որ Աստված խոսում է հրամայական տոնով՝ Վկայության խորանի վերաբերյալ ասելով. *«Պատվիրի՛ր Իսրայելի որդիներին, որ քեզ ձիթենու զուլալ, անարատ, ծեծած ձիթապտղի ձեթ բերեն լույսի համար, որպեսզի մշտավառ ճրագ լինի» (Ելք 27:20):* Իսկ ո՞րն է հրահանգ տալու պատճառը, ի՞նչ է տեղի ունեցել այս ընթացքում. մարդիկ բարի կամք չդրսևորեցին, չնախաձեռնեցին սեփական ցանկությամբ պատրաստելու Վկայության խորանը, բայց եթե նրանց տրվի հստակ կարգադրություն, նրանք հնազանդորեն կանեն այդ:

Վկայության խորանի կառուցման վերաբերյալ կարգադրություններ տալուց հետո Աստված պատվիրում է Մովսեսին. *«Դու Իսրայելի որդիներից քեզ մոտ կբերես քո եղբայր Ահարոնին, նրա հետ նաև նրա որդիներին, որ ինձ համար քահանայություն անեն Ահարոնը և նրա որդիներ Նադաբը, Աբիուդը, Եղիազարն ու Իթամարը» (Ելք 28:1):* Հետաքրքրական է, որ եբրայերեն բնագրում *«ինձ համար քահանայություն անեն»* արտահայտությունը դրված է եզակի թվով՝ *«ինձ համար քահանայություն անի»,* ինչը, ըստ մեկնիչների, այս դեպքում վերաբերում է միայն Ահարոնին. նրա որդիները հնարավորություն են ստանում՝ ծառայելու Վկայության խորանում միայն իրենց հոր արժանիքների համար: Ահարոնը և նրա որդիները սերում էին Ղևիի ցեղից: Վերջինս սահմանվում է իբրև կրոնական պարտականությունների համար պատասխանատու ցեղ:

Քահանայական զգեստներ: Դրանց կարևորությունը և նշանակությունը

Այս ամենին հաջորդում է Աստծո կողմից տրված մեկ այլ կարգադրություն, որ վերաբերում է Ահարոնի և նրա որդիների քահանայական զգեստներին: Աստված այսպես է պատվիրում Մովսեսին. *«Սրբազան զգեստներ թող պատրաստեն քո եղբայր Ահարոնի ու նրա որդիների համար, որպեսզի ինձ համար քահանայություն անեն» (Ելք 28:4):* Ինչո՞ւ են անհրաժեշտ քահանայական զգեստները, և, առհասարակ, ինչո՞ւ է անհրաժեշտ զգեստը մարդուն: Այն, ֆիզիկական գործառույթից բացի (մարմինը ծածկել, տաք կամ սառը եղանակին այն պաշտպանել), նախևառաջ ունի բարոյական նշանակություն: Սուրբ Գրքում զգեստն առաջին անգամ տրվում է մեր նախածնողներին՝ Ադամին ու Եվային, հենց Աստծու կողմից. *«Եվ Տերը՝ Աստված, Ադամի ու նրա կնոջ համար կաշվե հագուստներ պատրաստեց և հագցրեց նրանց» (Ծնն. 3:21):* Չնայած Ադամի և Եվայի գործած մեղքին՝ Աստված շարունակում է մտահոգվել նրանց համար. տալիս է ավելի դիմացկուն զգեստներ, քան թզենու տերևներն էին՝ այդ կերպ զերծ պահելով նրանց հնարավոր վտանգներից:

Հագուստը հիշեցնում է մարդուն իր՝ գիտակից լինելու մասին, ինչը զատում է նրան բնության մնացյալ արարածներից: Հագուստը նաև մարդկանց վրա տպավորություն թողնելու լավագույն միջոց է, քանի որ մարդիկ առաջին հերթին տպավորություն ստանում են որևէ մեկի արտաքին տեսքից: Երբեմն հանդերձանքը ցույց է տալիս հստակ պատկանելություն՝ որևէ խմբի կամ համայնքի, վառ օրինակ՝ զինվորական համազգեստը: Այս իմաստով ցանկացած հագուստ ունի հստակ նշանակություն և կարող է ծառայել տարբեր նպատակների: Այն մարդու ինքնագնահատականի ամենակարևոր ցուցիչներից է, և հետաքրքրական է, որ եբրայերենում հագուստ՝ שִׂבְלָ (լեվուշ) բառը թարգմանաբար նշանակում է «ամոթ չէ»: ➥ էջ 8

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Գեղարվեստն էլ ունի իր վարդապետությունը», կամ՝ «Ամեն բան անցողիկ է, մնայուն է գեթ արժեքը, որը փշրանքն է կատարելության»

Հարցազրույց Տ. Իսահակ վրդ. Պողոսյանի հետ

— Հայր Սուրբ, Ձեր գրական ճանապարհն սկսեցիք չափածոյով. բանաստեղծական մի շարք ժողովածուների հեղինակ եք, այնուհետև արձակը կարծես գերիշխող դարձավ: Բանաստեղծություններում և պոեմներում էլ արդեն իսկ նկատելի էր էպիկական շունչը: Ո՞րն է Ձեր նախընտրած ժանրը, որը Ձեզ լիարժեք ինքնարտահայտվելու հնարավորություն է տալիս:

— Անկեղծորեն պետք է ասեմ, որ բանաստեղծական ոճն ինձ չափազանց հոգեհարազատ է՝ գուցե նաև այն պատճառով, որ նախապես այդ ժանրով եմ ստեղծագործել, բայցև ակնառու է, որ հատկապես վերջին շրջանում արձակում էլ ինձ բավական «լավ եմ զգում ու պատկերացնում», թեև, հայելով նաև մեծերի անցած ուղուն, գիտեմ, որ տակավին բավական ճանապարհ կա անցնելու: Այդուհանդերձ, պետք է փաստեմ, որ ես նախ՝ հոգևորական եմ, համաժամանակ՝ մտածող և ստեղծագործող: Գրեթե բոլոր հայտնի ժանրերն ինձ հոգեհարազատ են և ծառայում են միևնույն նպատակին, քանի դեռ միտքը՝ աշխարհի բոլոր լեզուներով խոսող, մարդկության մշտական ուղեկիցն է, իսկ հաղթությունը՝ բոլոր տառապյալ ազգերի ու ազատ հոգիների նպատակակետը: Այս իմաստով ես բնավ երկփեղկված չեմ, մշտապես բաց և ինքնուրույն եմ և հակառակ ամեն տեսակ հիասթափությունների ու դժվարությունների՝ լավատես եմ, իմ համոզմունքներով էլ՝ անբեկանելի: Որովհետև, ինչպես կյանքն է փաստում, դժվարությունները նաև ելքեր են առաջ բերում, դրանց հաղթահարումը՝ մարդկայնություն և հոգեկան բավականություն: Այդուհանդերձ, ինչպես Շիրվանզադեն է ասում, «չկա կյանքից ավելի գեղեցիկ բան»...

— Վերջին երկու տարվա ընթացքում հրատարակել եք պատմական վիպակներ՝ «Հայրապետը», «Գրիգոր Մագիստրոս»: Պատմականն է գերիշխում Ձեր երկու ստեղծագործություններում. ազգային խնդիրների վերհանումը, պատմական երևակայությունը, շարադրանքի եղանակը, ոճն ու բառագանձը այդ մասին են խոսում: Պատմությունն է Ձեզ առավելապես հետաքրքրում, թե՞ դա միջոց է գլխավոր կերպարների՝ Ներսես Շնորհալու և Գրիգոր Մագիստրոսի կյանքը պատկերելու:

— Պետք է հավելեմ, որ վերջին շրջանում կյանքի են կոչվել նաև «Պատմագեղարվեստական ակնարկները» և մի շարք թարգմանությունների վերահրատարակություններ: Ընդհանրապես, պատմությունը, իրողություն լինելուց զատ, միջոց և հնարավորություն է՝ մասնահատուկ անդրադարձով վեր հանելու անցյալի կարևոր փաստերն ու վավերագրերը: Հ. Սահյանն ասում է, որ պատմությունն անցյալը վերարթնացնելու այն կերպն է, որը համաժամանակ մարդուն վերահաստատում է իր կոչման մեջ: Պ. Սևակը պատմությունը բնորոշում է վեհի ու վսեմի ջատագովություն, իսկ Ավ. Իսահակյանն իրավացիորեն նկատում է, որ ստեղծագործելու համար նախապայման է անհատական և անկեղծ ներշնչանքը: Ասում է. «Մարդն այնքան մեծ է, որքան մեծ են նրա երազները»:

Փաստելի է, որ մտածող մարդը կրկնակի և անգամ բազմակի կյանք է ապրում: Կարող ենք արձանագրել, որ



միաժամանակ և՛ ստեղծագործություն, և՛ պատմություն է նաև Աստծու և մարդու հարաբերությունը: Իսկ ավելի ամբողջական՝ անցյալի համակեցությունը ներկայի մեջ այն հոգևոր ապրումն է, որը մեծապես պայմանավորվում է հիշողությամբ: Այս սկզբունքը հատկապես տեսանելի է Ս. Լուսավորիչ և Սահակ Պարթև հայրապետների և մանավանդ եռամեծ վարդապետ և հայոց գրերի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի դեպքում: Արվեստը կամ գեղարվեստը մի դեպքում՝ ավանդույթների, մյուս դեպքում՝ խորհուրդների կամ իրերի ներքին բովանդակության, մի այլ դեպքում՝ լուսավորության կամ ներդաշնակության, իսկ իբրև կանոն՝ ձևի և բովանդակության համերաշխ, ներդաշն պատկերագրումն է կամ բյուրեղացումը: Այս ճանապարհին ամենքը՝ ներառյալ ստեղծագործողը, միջոց են՝ գեղեցիկը որոնելու և ներկայացնելու համար:

— Ինչպե՞ս եք լուծում գլխավոր կերպարի ամբողջականության խնդիրը: Պատմակենսագրական փաստերը բավարա՞ր են արդյոք, թե՞ բացերը լրացնում եք ստեղծագործական երևակայությամբ:

— Որպես կանոն՝ փաստերը չեն բավարարում. երբեմն նաև այնպիսի դեպքում, երբ դրանք առկա են: Բայց գեղարվեստը հենց նրա համար է, որ լրացնի, գեղագիտացնի, հարկ եղած դեպքում «սրբագրի» իրողությունները: Չէ՞ որ գեղեցիկն զգալն ու գնահատելն արդեն իսկ նշանակում է՝ ինչ-որ իմաստով մասնակից դառնալ նրա արարմանը: Իմ կերպարները հաճախ և ի սկզբանե ամբողջական են ու խորհրդավոր: Նրանց կեցությունը նկարագրող հետագա իրողությունները հաճախ լրացուցիչ և սյուժետային բնույթ ունեն: Ինձ համար էականը, առանձին վերցրած, նրանց կյանքի սկզբնավորությունը կամ վերջավորությունը ներկայացնելը չէ, թեև այդտեղ էլ ակներև խորհուրդ կա, այլ գլխավորապես նրանց միջոցով բազմաձյուղ կյանքի հասանելի և անհասանելի հանգամանքները բացահայտելը: Որովհետև կրթություն է նաև չիմացած բաների ընդունումը գիտակցական դաշտում, իսկ արդիականությունն այլ բան չէ, եթե ոչ գոյութենաբանության թանձրացումը՝ փոխպայմանավորված ժամանակների ներթափանցմամբ և գեղաձևումով:

— Քրիստոնեական համբերություն, անդորրություն կա Ձեր պատումի խորքում, քրիստոնյա աշխարհայացք ու հոգեբանություն: Անձնական հոգեբանական դրամաներ կամ բախումներ գրեթե չկան: Անանձնական կյանքո՞վ էին ապրում գլխավոր հերոսները, թե՞ դա Ձեր հղացումն է, կյանքի հանդեպ Ձեր վարդապետական վերաբերմունքը:

— Ինչպես քաջահայտ է, խոսքը մտքի ծառան է, և գեղարվեստն էլ ունի իր ուրույն սահմաններն ու նպատակադրումները, ավելի դիպուկ՝ «վարդապետությունը», որտեղ ձգտումը կատարյալին ու հավերժին պետք է արտահայտվի այնպիսի գիտական ճշտակատարությամբ, որ երբևէ արվեստը չհավակնի իջնել արհեստից էլ ավելի ցածր աստիճանի: Իմ ստեղծագործություններում բախումներն ու հակասությունները մատուցվում են չափազանց նուրբ դիտակետից, այնքանով, որքանով դրանք ներդաշնակվում են տրվածի բուն իսկությանը: Քրիստոնեական աշխարհայացքն իմ համոզումների և հոգեբանության առանցքում է, իսկ ստեղծաբանական տիրույթը՝ այն տարածությունը, որտեղ ընթերցողին է փոխանցվում սկզբունքների այն համախումբը, որը լիությամբ ու լրիվությամբ պատճառաբանում է անանձնական կյանքի առավելությունները. «Ամեն բան անցողիկ է, մնայուն է գեթ արժեքը, որը փշրանքն է կատարելության»,— ինչպես իմ վերջին շրջանի ստեղծագործություններից մեկում բնորոշում է հերոսներից մեկը: Այս իմաստով միանգամայն դիպուկ է Ձեր բնորոշումը:

— Առաջիկայում ի՞նչ նոր ստեղծագործության կարող է սպասել ընթերցողը:

— Վստահաբար մեկ բան կարող եմ ասել, որ քանի դեռ կամ, ասելիք լինելու է, ինչպիսի խորությամբ՝ թող վկայի ընթերցողը: Բանաստեղծությունների ևս մեկ ժողովածու եմ ամբողջացնում, կշարունակեմ նաև զրույցների, առակների, պատմությունների շարքը: Արդեն լիովին պատրաստ է «Ուսուցիչը» վերտառությամբ բարոյախրատական ստեղծագործությունը, ուր տեղ գտած մտորումներն ու պատկերագրումներն ընթերցողին լրացուցիչ, բարեպատիկ առիթ կընձեռեն՝ մտածելու անցյալի ու ներկայի, հայրենիի և եկեղեցու, մարդու և ժողովուրդների և շատ այլ հարցերի շրջագծում: Ուրիշ խոսքով՝ վիպակը մեր ժամանակի ներկապնակն է՝ կենցաղային դրվագներով, մարդկային հարաբերությունների սրբագրման տեսարաններով, ստեղծագործելու և հանուրի կյանքին մասնակից լինելու ընդգծված անհրաժեշտությամբ: Այստեղ անդրադարձ կա նաև կեղծ և իրական աշխարհաքաղաքացիությանը, ինչպես նաև համաաշխարհայնացման ներբերած վնասներին ու վերահաս վտանգներին: Ընթացքի մեջ են «Ընտանիք և աստվածաբանություն» աշխատասիրության ռուսերեն և անգլերեն թարգմանությունները: Տերը կամենա՝ կլինեն մասնահատուկ անդրադարձներ նաև Լուսավորիչ Հայրապետի, Մաշտոց վարդապետի մասին, ինչպես և ազատության աստվածաբանության շուրջ:

— Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝ Մեղրի ՂՈՒԿԱՍՅԱՆԻ

Տ. Իսահակ վրդ. Պողոսյան.

Բանաստեղծություններ

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

«Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
Եվ այնքան ներում — ո՞ր երկրի սրտում...»:
Վ. Տերյան

Մեկնում է, ահա, գիշերը անձայն,
Սահում է անլուր՝ փաթիլի նման,
Շաղվում է ինչպես մերկ ծաղկափոշի,
Հանգչում մութի մեջ տխուր, լռելյայն:
Մեղմ հոսանքներով ցրում է քամին
Մայթերին նիրհած ծաղիկ ու տերև,
Շաղն է բարձրանում կանաչ դաշտերից,
Լուսին ու աստղեր մեկնում են եթեր:
Երկնակամարին արևն է դաջվում՝
Հանդարտ ձգելով ծանրությունն իր բարկ,
Ամպերը քնքուշ հեքիաթ են ասում՝
Սահուն հոսելով ծփանքների տակ:
Եվ անհունի մեջ ու երկրի վրա
Վերնական քնքուշ դյութանք է կաթում,
Նուրբ ու քաղցրանուշ աղոթքը նրա
Համակ աշխարհի ցավերն է զատում:

ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ

Հանգչում է օրը
Քո երանաշնորհ
Աչքերի վրա,
Դո՛ւ, անցնող երեկ
Ու երազ վաղվա:
Բացվում է նորը
Քո հեզահամբույր
Ժայռերի վրա,
Դո՛ւ, հառնող անցյալ՝
Վառվող անխնա:
Անհուն գիշերվա
Գալիքը զարդո՛ղ,
Քեզ ապավինած
Իմ բեկվող հոգին
Տրտում է հիմա
Անցնող օրերից,
Զարթնող խոհերի
Խինդ ու բովերից
Ու երկինք հասնող
Հրատ մովերից:
Հանգչում է օրը
Քո երանաշնորհ
ուսերի վրա,
Դո՛ւ, անցնող երեկ
Ու գալիք վաղվա:

ԱՂՈԹՔ ԵՐԵԿՈՅԻ

Երկնքի վրա իջավ թանձր մութ,
Ցոլացին աստղերն ինչպես ծիածան,
Արևը քաշվեց ամպերի մեջ լուրթ՝
Բոցավառելով հուսառատ կածան:
Երկնքի վրա՝ պայծառ, աստղաշուրթ,
Ձեփյուռ ու եթեր, երազ քաղցրանուրբ,
Դեպի անհունը ձգվող խաս հետքեր
Ու փշաքաղվող ոսկյա տարերքներ:
Երկնքի վրա՝ անզուսպ արտասուք,
Թռչող երանգներ ու փախչող բույրեր,
Անհաս բարձունքում՝ պերճանք վեհաշուք,
Անվերջ սավառնող երկնածին հյուրեր:

ԽՈՐ ՎԻՐԱՊ

Խորահատակ ու խորազարդ,
Բլուրների վրա անթարթ
Բազմել է վեհ ու վիթխարի մի հոյակերտ՝
Հանդարտախոս, խաղաղահաս ու ակնդետ,
Խորահատակ, խորաթափանց,
Ակունքներով վերնագնաց:
Նայում է լուռ,
Հայում բյուր դալարներին աստվածատուր
Ու խաչազարդ խնամարկում,
Իբրև կենաց դետ ու ուրուր:
Խորահատակ ու խոհակերտ,
Ընդեղձանող ամենքի հետ՝
Բարձրանում է մինչև երկինք,
Վերացնում ամեն նախատինք:
Ապա փութով դառնում է ցած
Գագաթներից երկնագնաց
Ու վիմափոր գահին բազմած՝
Կռում է սեր, փառք ու հույսեր
Եվ աղոթքներ հեզատարած,
Արևասեր,
Արևատեր
Ու անմոռաց...
Խորահատակ ու խորազգաց՝
Ձվարթում են կյանք ու արև,
Մարդ ու Աստված:
Ճառագում է բոսորներով երկնապարգև,
Գեղազարդում կարոտները հազարաթև:
Խորախորհուրդ ու խորիմաց՝
Խոնարհվում է արևաբույր շողը իջած
Քո բազմաշերտ ու կենսատու վեմ ու սալին,
Նորոգվում է անվերադարձ համակ բարին
Ու խայտում է գորովը տաք քո սնարին:

➥ էջ 7

Բանաստեղծություններ
➥ էջ 6

ՀԱՆԴԱՐՏ-ԽԱՂԱՂ

Հանդարտ, խաղաղ, ինչպես ձյունը,
Երկինքներից ամեն անգամ
Վար է իջնում քո խանդաղատ
օրհնությունը:
Հրակարմիր ու բոցակեզ քո շրշյունը
Լռեցնում է ցավ ու կսկիծ՝
Ջերմացնելով նվիրական հողն ու տունը:
Հանդարտ, խաղաղ, ինչպես սյուքը,
Տարածվում են անհունի մեջ
Աստվածատուր խինդն ու գութը:
Հանդարտ, խաղաղ, ինչպես օրը,
Երկարում ես թևերդ տաք
Ու ձեռնադրում քո օրորը:
Հանդարտ, խաղաղ, ինչպես նինջը,
Իջնում ես հար ու անայլայլ,
Ծագեցնում ես գեղ ու դայլայլ
Ու հռչակում ամենուրեք քաղցր ջինջը:
Երանական սավառնում են
Բախտն ու խիղճը,
Ու միաբան սրտապնդվում
Վիշտն ու ճիչը:
Հանդարտ, խաղաղ
Մեկնվել ես
Ժայռ ու ծերպին,
Ամոքում ես
Ու սատարում
Քեզ հանդիպող ամեն ելքին,
Դարմանում ես
Ամեն մի վերք
Ու հիանում
Երկնագնա մեն մի հևքով:
Հանդարտ, խաղաղ,
Երկնաբարբառ
Հրայրք կայտառ
Սավառնում են
Քո չխամրող
Վեր ու դեմքին:
Հանդարտ, խաղաղ
Մեխվել ես դու
Քերծ ու գետնին,
Քարաբլուր բազուկներով
Գրկել հպարտ
Ժայռ ու սեպին
Ու մխիթար ակունքներով
Բույր ես մեկնում,
Հուր ու երազ՝
Կյանք ու դետին:
Հանդարտ, խաղաղ լույս է կաթում
Քո զրնգուն համայնի մեջ,
Դու մեղմանուշ ամբարում ես
Հոգս ու բերկրանք, կանչ ու աղերս:

ԱՆՀՈՒՆԻ ՄԵՋ

Անհունի մեջ խորհուրդ կա վեհ
Ու տառապող լուսե հեքիաթ,
Աննենգ ճախրող հույսի եթեր,
Մշտամորմոք ցավ ու դյութանք:
Անհունի մեջ՝ խաս ու խրատ
Ու մշտաբորբ վառ ասուպներ,
Ականակիթ խինդ ու հրատ,
Երգ ու երազ տաք, ոսկեթել:
Անհունի մեջ՝ հրաշք անվերջ
Ու երկնային տեղատարափ,
Սեր ու կրակ արևաշեջ,
Ջվարթառատ, աստղաթափ:

ՀԱՆԳՉՈՒՄ ԵՆ ՕՐԵՐԸ

«Խմիր հոժար կամքով, իբրև լեղի
մի թաս,
Տառապանքիդ բաժակը՝ վաղվա
կյանքով հղի...»:
Ե. Չարենց

Հանգչում են օրերը, փախչում են,
Գալիքը՝ անհայտ ու բեկվող.
Օրերը լողում ու կորչում են,
Օրերը՝ երբեմնի հզոր:
Խոտոր է ճամփան ու տկլոր է,
Անզարդ է եթերը գգվող.
Անտակ է ներկան ու անհայտ է,
Հակինթը մարում է մոլոր:
Մաքուր է միայն լաջվարդը,
Լուսեղեն, ողորկ ու դյութող.
Օրերը հոսում ու շիջում են,
Օրերը՝ բացվող ու անցնող:

Սալոմեի կերպարը Սուրբ Գրքում և գեղարվեստական գրականության մեջ

Աստվածաշնչի ազդեցությունն արվեստի և գրականության վրա զգալի է նաև կերպարային համակարգի առումով: Աստվածաշնչյան անձինք դարձել են արվեստի և գրականության յուրահատուկ կերպարներ, որոնցից մեկն էլ Հերովդիայի դուստրն է՝ Սալոմեն: Նրա վերաբերյալ հիշատակություններ կան Ավետարաններում՝ Մատթեոսի 14:1—12 և Մարկոսի 6:14—29 հատվածներում՝ Հովհաննես Մկրտչի գլխատման պատմության մեջ: Ավետարանիչները նրան անունով չեն կոչում, բայց ըստ պատմիչ Հովսեփոս Փլավիոսի «Հրեական հնախոսություն» աշխատության՝ նրա անունը Սալոմե էր:

Պատումը հետևյալն է. Հերովդես Անտիպասը հրամայում է ձերբակալել Հովհաննես Մկրտչին, քանի որ վերջինս դատապարտում էր նրա ամուսնությունը Հերովդիայի՝ իր եղբոր կնոջ հետ: Մի տոնակատարության ժամանակ, երբ Հերովդեսի խորթ դուստրը պարում է նրա առջև, Հերովդեսը՝ հիացած նրա պարով, երդումով խոստանում է տալ նրան ցանկացած բան, որ կխնդրի: Սալոմեն իր մոր՝ Հերովդիայի դրդմամբ պահանջում է Հովհաննես Մկրտչի գլուխը, քանի որ Հովհաննես Մկրտիչը մեղադրում էր Հերովդեսին և Հերովդիային և քննադատում նրանց ամուսնությունը: Հերովդիան, զգալով հնարավոր սպառնալիքը Հովհաննեսի բացահայտ և խիզախ քննադատության պատճառով, որոշում է վրեժ լուծել, որը և կատարում է իր դստեր՝ Սալոմեի միջոցով: Քանի որ Հովհաննես Մկրտչին ժողովուրդը ընդունում էր որպես մարգարեի, Հերովդեսը դժկամությամբ, տված խոսքը չդրժելու համար հրամայում է սկուտեղի վրա բերել նրա գլուխը:

Սալոմեի կերպարն առաջին հայացքից թերևս կարող է ընկալվել միամտության և անմեղության դիտանկյունից. նա միայն կատարում էր մոր ցանկությունը: Սակայն վերջինիս պարը և մոլորեցնող գործողությունները նրան դարձնում են մեղսագործ: Այստեղ մեղքի և պատժի կապը ցույց է տալիս, որ նույնիսկ անմեղ թվացող գործողությունները, որոնք կարծես չունեն թաքցրած չար մտադրություն, կարող են հանգեցնել ողբերգական հետևանքների: Այս կերպարը հիշեցնում է դասական գրականության այն կանանց, որոնք իրենց գեղեցկությամբ ու խելքով դառնում են կործանարար (օրինակ՝ Հեղինե Տրոյացին կամ Կլեոպատրան):

Սալոմեի կերպարին հանդիպում ենք բազմաթիվ ստեղծագործություններում, որոնցից առավել հետաքրքրական է միջնադարյան հայ բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցու «Վասն սուրբ Յովհաննու գլխատման» երկը:

Հովհաննես Թլկուրանցու վիպական տաղում Սալոմեի մեղավորությունը զուգորդվում է Հերովդիայի նենգության հետ, ինչը համապատասխան էր միջնադարյան քրիստոնեական մեկնությունների տրամաբանությանը, որտեղ կնոջ կերպարը հաճախ առնչակցվում էր կամ բարեպաշտությանը, կամ գայթակղությանը: Թլկուրանցու ստեղծագործության մեջ Սալոմեն մարմնավորում է մեղսագործ գայթակղությունը, որը հակադրվում է Հովհաննես Մկրտչի բարոյական մաքրությանը և աստվածապաշտությանը: Թլկուրանցու պատկերացմամբ՝ Սալոմեն ինքնուրույն կամք չունի, այլ իր մոր՝ Հերովդիայի կամքի կույր կատարողն է: Նա դաստիարակվել էր անբարո միջավայրում, որտեղ մարմնական հաճույքն ու իշխանական ինտրիգները գերակշռում են: Թլկուրանցին շեշտադրում է, որ աղջիկն ինքնուրույն չի որոշում Հովհաննես Մկրտչի գլխատումը, այլ ընդամենը կատարում է Հերովդիայի պահանջը՝ ցույց տալով, որ Սալոմեն նույնպես մեղսակից է հանցանքին, բայց հիմնական նախաձեռնողը չէ: Սալոմեի ամենահայտնի արարքը՝ պարը, Թլկուրանցու վերլուծության մեջ վերածվում է սատանայական խաբեության խորհրդանիշի: Նրա մարմնական գեղեցկությունը և պարը Հերովդեսին մոլորեցնում են, ինչը հանգեցնում է վերջինիս անմիտ խոստմանը՝ տալ աղջկան ամենը, ինչ նա կցանկանա: Այսպիսով՝ Սալոմեն մարմնավորում է ոչ միայն մեղքը, այլև այն խաբուսիկ հաճույքները, որոնք մարդուն հեռացնում են ճշմարիտ արժեքներից: Թլկուրանցին այս

Վարդգես Սուրենյանց, Սալոմե, 1907 թ.

կերպարը դարձնում է զգուշացում այն մասին, թե ինչպես կարող են մարմնական ցանկությունները և արտաքին ազդեցությունները մարդուն մղել կործանման: Բացի այդ՝ որոշ ավանդապատումներում Սալոմեն պատժվում է կամ սատանայական պատուհասով, կամ դժբախտ պատահարով: Թլկուրանցու գործում թեև այս պատիժը չի նկարագրվում, բայց ակնարկվում է, որ անբարո վարքի հետևանքը կործանումն է:

Հաջորդ ստեղծագործությունը, որին կանդրադառնանք, Վահագն Դավթյանի «Տենդը» պոեմն է, ուր Սալոմեի կերպարը ներկայացվում է նորովի՝ ավանդական քրիստոնեական ընկալումները համադրելով նոր գաղափարական շերտերի հետ: Եթե Աստվածաշնչում և միջնադարյան մեկնություններում Սալոմեն ներկայացվում է որպես մեղքի իրականացման գործիք, ապա Վ. Դավթյանի պոեմում նրա կերպարը ձեռք է բերում ավելի խորքային, բարդ ու հակասական բնույթ՝ դառնալով խորհրդանիշ այն ուժերի, որոնք տանում են դեպի անկում, բայց նաև կրում են հակասական հմայք:

Վ. Դավթյանի պոեմում Սալոմեն նույնքան գայթակղիչ և մահաբեր է, որքան ավանդական ընկալումներում: Նրա կերպարը արտացոլում է գեղեցկության այն ուժը, որը կարող է կործանարար դառնալ, երբ զրկված է բարոյական ու հոգևոր բովանդակությունից: Նա մարմնավորում է գայթակղությունը, բայց միաժամանակ ունի խորհրդավոր, գրավիչ, գրեթե դիվային ուժ, որն ստիպում է մարդկանց ենթարկվել նրան: Վ. Դավթյանի Սալոմեն միանշանակորեն բացասական կերպար չէ. նա առավելապես ներկայացվում է որպես ճակատագրական ուժ, որի ազդեցությունն անխուսափելի է: «Տենդը» պոեմում Սալոմեի կերպարն ստանում է ավելի լայն՝ քաղաքական և պատմական նշանակություն: Նա դառնում է դարերի ընթացքում կրկնվող այն ուժերի մարմնավորումը, որոնք իրենց գայթակղիչ բնույթով մարդկանց մղում են ճակատագրական որոշումների: Եթե Աստվածաշնչում Սալոմեն միայն գործիք է Հերովդիայի ձեռքում, ապա Դավթյանի պոեմում նա միաժամանակ ինքնուրույն ուժ է, որը գերում է, բայց նաև ավերում: Այս տեսանկյունից Սալոմեն կարող է ընկալվել որպես մարդկության պատմության մեջ տարբեր ժամանակներում գործող կործանարար գայթակղությունների խորհրդանիշ՝ լինի դա քաղաքական դավաճանություն, թե բռնապետական գրավչություն, որն սկզբում թվում է գրավիչ, բայց հետո հանգեցնում է անկման:

Ինչպես ավանդական մեկնություններում, այնպես էլ Վ. Դավթյանի պոեմում, Սալոմեի կերպարը հակադրվում է Հովհաննես Մկրտչին: Հովհաննես Մկրտիչը ներկայացվում է որպես ճշմարտության քարոզիչ, որը չի վախենում ասել այն, ինչ բոլորին հայտնի է, բայց լռում են: Իսկ Սալոմեն այն ուժն է, որը ճնշում է ճշմարտությունը, որովհետև նրա ազդեցության ներքո ճշմարտությունը դառնում է վտանգավոր, անցանկալի: Սա խորհրդանշական է նաև Վ. Դավթյանի ստեղծագործության քաղաքական ենթատեքստի տեսանկյունից. այն դարերում, երբ ճշմարտությունը վտանգավոր էր, հաճախ հայտնվում էին սալոմեները, որոնք իրենց ազդեցությամբ մերժում էին արդարությունը և հրահրում դրա կործանումը:

Սալոմեի վերաբերյալ մյուս ուշագրավ ստեղծագործությունը Օսկար Ուայլդի «Սալոմե» ողբերգությունն է, որտեղ նա ներկայացվում է որպես «ֆատալ»՝ ճակատագրական կին, որն ունի սեփական ցանկությունները և ուժը: Օսկար Ուայլդի պիեսում, որ հայերեն թարգմանել է Վահան Տերյանը, Սալոմեն, ի տարբերություն Սուրբ Գրքի և հայ գրականության, ինքնուրույն է հանցավոր վճիռը կայացնում. նա սիրահարվում է Հովհաննես Մկրտչին և մերժվելով՝ վրեժխնդիր է լինում:

Սալոմեի կերպարը քրիստոնեական մշակույթում հաճախ ներկայացվել է որպես գայթակղիչ և խաբուսիկ կին, որի պարը դարձավ մի մեծ աստվածային մարգարեի՝ Հովհաննես Մկրտչի մահվան պատճառ: Նրա կերպարը Աստվածաշնչում և քրիստոնեական ավանդություններում բավականին բարդ է և բազմաշերտ: Նա ներկայացվում է որպես երիտասարդ, գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ մանիպուլյացիայի ենթարկվող աղջիկ, որը դառնում է մոր՝ Հերովդիայի դաժան ծրագրի գործիքը: Սալոմեն, ըստ Աստվածաշնչի, Հերովդեսի առաջ կատարում է գայթակղիչ պար, որն ունի դավադիր նպատակ, սակայն նա սկզբնապես չունի որևէ անձնական թշնամանք Հովհաննես Մկրտչի հանդեպ: Հերովդեսին ուղղված նրա խնդրանքը՝ Մկրտչի գլուխը սկուտեղի վրա մատուցելու վերաբերյալ, պայմանավորված է մոր ազդեցությամբ: Այս տեսանկյունից Սալոմեին կարելի է դիտարկել որպես անինքնուրույն, հեշտ ներգործվող կերպարի, որը դեռ չի ձևավորել իր բարոյական սկզբունքները: Նա ենթարկվում է Հերովդիայի հրամանին՝ առանց հարցադրելու իր արարքի հետևանքները:

Սալոմեն հաճախ մեկնաբանվում է որպես կնոջ հրապույրի, մարմնական ուժի ու գայթակղության մարմնացում: Նրա պարը ոչ միայն հաճույք է պատճառում Հերովդեսին, այլև դրդում նրան անխոհեմ որոշում կայացնելու: Այս իմաստով Սալոմեն ներկայացվում է որպես գայթակղության և մահվան պատճառ դառնալու խորհրդանիշ: Բայց եթե ավելի խորը վերլուծենք, Սալոմեն իրականում չունի այն լիակատար իշխանությունը, որը հաճախ վերագրվում է նրան արվեստում: Նա պարզապես օգտագործվում է իր մոր կողմից՝ դառնալով քաղաքական և անձնական վրեժխնդրության գործիք:

Սալոմեն դարձել է արվեստի և գրականության կարևոր կերպարներից մեկը: Շատ արվեստագետների համար նա ոգեշնչման աղբյուր է. նրա կերպարը հետաքրքրել է ոչ միայն գրողների, այլև նկարիչների և երաժշտագետների: Սալոմեին նկարել են Սանդրո Բոտիչելլին, Ալբրեխտ Դյուրերը, Տիցիանը, Ռեմբրանդտը, Կարավաջոն, Լուկաս Կրանախ Ավագը, Ռուբենսը, Գյուստավ Դորեն, Վարդգես Սուրենյանցը, Լեյբա Անտոկոլսկին և ուրիշներ: Ռիխարդ Շտրաուսը Օսկար Ուայլդի պիեսի հիման վրա ստեղծել է «Սալոմե» օպերան, Ֆլորան Շմիտը՝ «Սալոմեի ողբերգությունը» բալետը:

Սալոմեին տարբեր ժամանակներում տարբեր կերպ են մեկնաբանել: Միջնադարյան քրիստոնեական արվեստում Սալոմեն հաճախ պատկերվել է որպես մեղավոր և անբարոյական կերպար: 19—20-րդ դարերում Սալոմեի կերպարը փոխվեց. նա սկսեց ընկալվել որպես խորհրդապաշտության, ֆեմինիզմի և ազատության խորհրդանիշ:

Չնայած Սալոմեն հայ գրականության մեջ հաճախ չի հանդիպում որպես առանձին կերպար, նրա պատմության մետաֆորան՝ որպես կրքի, ճակատագրի, մանիպուլյացիայի և իշխանության խորհրդանիշ, արտացոլվում է հայ գրողների շատ ստեղծագործություններում:

Մելինե Գրիգորյան

Ահարոնյան քահանայության հաստատումը....

↩ էջ 5

Ահա այս տրամաբանությամբ քահանայական զգեստները ևս ունեն կարևորագույն նշանակություն. դրանք մատնանշում են այն հանգամանքը, որ քահանաներն այս կյանքում ունեն հստակ նախասահմանված առաքելություն: Նրանց արտաքին տեսքը պետք է լինի ազդեցիկ և դաստիարակիչ: Հրեա մեկնիչներն ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ զոհաբերության վավերականությունը կախված էր թե՛ քահանայի հանդերձանքից և թե՛ ամեն տեսակ մանրամասնությունից, որ վերաբերում էր նրանց ծառայությանը: Ուստի, եթե զգեստները թերի են, ապա անվավեր է դառնում նաև կատարված զոհաբերությունը:

Քահանայական զգեստների ընդհանուր թիվը 8-ն է. հասարակ քահանաների դեպքում՝ 4, իսկ քահանայապետի դեպքում՝ 8: Առաջին չորսը երկուսի համար էլ ընդհանուր են:

1. Անդրավարտիք — Այն պետք է պատրաստված լիներ կտավից և քահանաների մեջքից մինչև սրունքներ հասներ:

2. Շապիկ — Սպիտակ բեհեզից հյուսված հանդերձ, որ պետք է լիներ երկար և ծածկեր քահանայի ոտքերն ամբողջությամբ՝ մինչև ոտքի թաթերը:

3. Գոտի — Բեհեզյա էր, նախշազարդ: Երկարությունը հասնում էր մոտ 15 մետրի, մեջքին կապված լինելուց զատ՝ այն խաչաձև փաթաթվում էր կրծքավանդակին:

4. Ապարոշ — Գլխի փաթթոց, որ դարձյալ պատրաստված էր նուրբ բեհեզից:

Քահանայապետի դեպքում սրանց ավելանում էին ևս 4-ը.

5. Պատմուճան — Այն հագնում էին շապիկի վրայից. ավելի կարճ էր, քան վերջինս, և հասնում էր մինչև սրունքներ: Հյուսված էր բացարձակապես մեկ կտորից, *«որպեսզի այդ զգեստը չպատռվի» (28:32),* և ստորին հատվածում ուներ գործած նռան ծաղկաբողբոջներ ու ոսկե զանգակներ: Վերջիններս զգուշացնում էին քահանայապետի՝ դեպի Սրբություն Սրբոց շարժվելու մասին և ծառայում էին նրան իբրև հիշեցում՝ իր պարտականություններն օրենքով սահմանված կարգով կատարելու մասին: Դրանց միջոցով ժողովուրդը տեղեկանում էր, որ քահանայապետը Սրբություն Սրբոցի տարածքում է: Սուրբ Գիրքն ասում է. *«Դա թող հագնի Ահարոնը, որպեսզի երբ պաշտամունք է կատարում, Տիրոջ առաջ սրբարան մտնելիս ու ելնելիս լսվեն դրանց արձակած ձայները, և Ահարոնը չմեռնի» (Ելք 28:36):* Երկրորդ բացատրությամբ՝ զանգակներն անհրաժեշտ էին, որ քահանայապետի հանկարծակի մահվան դեպքում մարդիկ ստիպված չլինեին մտնել Սրբություն Սրբոց, ինչը խստորեն արգելված էր: Ուստի, նախապես քահանայապետի ոտքից պարան էին կապում՝ նմանատիպ դեպքերը կանխելու և հարկ եղած դեպքում, առանց ներս մուտք գործելու, նրան պարանի օգնությամբ դուրս քաշելու համար:

6. Եփուդ — Այն պատրաստված էր մաքուր ոսկուց, կապույտ, ծիրանագույն և կարմիր մանվածքից ու նրբահյուս բեհեզից: Հագնում էին պատմուճանի վրայից. ավելի կարճ էր, քան վերջինս, և հասնում էր գոտկատեղից մինչև ծնկներ: Եփուդի երկու ուսերի վրա պետք է լինեին զմրուխտյա ականաքարեր՝ վրան քանդակված Իսրայելի տասներկու ցեղերի անունները. *«Ահարոնը, ի հիշատակ նրանց, Աստծու առաջ իր երկու ուսերի վրա պետք է բարձրացնի Իսրայելի որդիների անունները» (Ելք 28:12):* Աստվածաշնչի որոշ հատվածներում, որտեղ խոսվում է կուռքերի կամ կռապաշտության դեպքերի մասին, առկա են եփուդի վերաբերյալ հիշատակություններ, որոնք, ուսումնասիրողների պնդմամբ, վկայում են, որ զգեստի այս տեսակը փոխառված է եղել Եգիպտոսից ու Միջագետքից (Դատ. 8:27, 17:5, 18:17—21), որտեղ ոսկուց պատրաստված զգեստներով սովորաբար ծածկում էին կուռքերի արձանները՝ խորհրդանշելով ծիսական արարողությունների ժամանակ նրանց ներկայությունն ու մասնակցությունը: Եփուդը գործածական էր նաև ոչ քահանաների պարագայում, օրինակ՝ մանուկ Սամուելը, որը, *«եփուդ հագած, Տիրոջ առջև ծառայություն էր անում» (1 Թագ. 2:18):* Եփուդի վրա ամրացվում էր դատաստանի լանջապանակը:

7. Լանջապանակ — Պատրաստված էր ոսկուց, կապույտ, ծիրանագույն և կարմիր մանվածքից ու նրբահյուս բեհեզից: Սրա վրա չորս շարքով ամրացված էին տասներկու քարեր, որոնք խորհրդանշում էին Իսրայելի ցեղերին. այս կերպ արտահայտվում էր ցեղերի միությունը: Սրա վրա էին դրվում նաև Ուրիմն ու Թումիմը, որոնք ծառայում էին իբրև միջոց՝ Աստծո կամքն իմանալու համար. *«Դա թող լինի Ահարոնի կրծքի վրա, երբ նա, սրբարան մտնելով, ներկայանա Տիրոջը: Ահարոնը Տիրոջ առաջ իր կրծքի վրա միշտ թող կրի Իսրայելի որդիների դատաստանի լանջապանակը» (Ելք 28:30):* Ի տարբերություն մնացյալ պարագաների, որոնց նկարագրությունը տրվում է, Ուրիմի և Թումիմի պարագայում դրանց պատրաստման մասին չի խոսվում:

Հայտնի է, որ աստվածություններին հարցումներ ուղղելու սովորույթը և «այո» կամ «ոչ» պատասխան ակնկալելը հնագույն ժամանակներում տարածված էին ամբողջ Մերձավոր Արևելքում: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում բաբելոնյան որոշ բնագրեր, որոնք պարունակում են հիշյալ հարցումների մասին հետաքրքրական տարբեր պատմություններ: Գոյություն ունեին «դրական» և «բացասական» քարեր, որոնք հիմնականում եղել են երկու տեսակի՝ բաց ու մուգ, և լայնորեն կիրառվել են Միջագետքում: Երեք անգամ անընդմեջ դուրս եկած քարը հուշում էր նախապես տրված հարցի պատասխանը:

8. Խույր — Քահանայապետի պարագայում սա փոխարինում է ապարոշին: Զգեստի վերջին կտորն է, որի վրա ճակատի կողմից ամրացված էր մաքուր ոսկուց պատրաստված թիթեղ՝ հետևյալ գրությամբ՝ *«Ընծայված Տիրոջը» (Ելք 28:36, գրաբարում՝ «Սրբութիւն Տեառն»):* Սա պետք է ծառայեր իբրև մշտական հիշեցում քահանաներին և բոլոր նրանց, ովքեր կտեսնեին այդ գրվածքը, որ բոլոր հոյակապ զգեստները, դրանց զարդարանքները՝ ոսկով և թանկարժեք քարերով, ոչ թե մարդուն վեհացնելու համար են, այլ Տիրոջ անունը բարձրացնելու: Ելք 28:38-ում կարդում ենք. *«Դա կկապես Ահարոնի գլխին դրվող խույրի ճակատին: Ահարոնը թող իր վրա վերցնի այն բոլոր մեղքերը, որ Իսրայելի որդիները կգործեն սուրբ բաներ ընծայաբերելու ժամանակ:* ***Դա միշտ Ահարոնի ճակատին պետք է լինի, որպեսզի այդ ընծաները ընդունելի լինեն Տիրոջը»:*** Այն, ինչ զոհաբերվում է Աստծուն, պետք է լինի կատարյալ, առանց որևէ թերության: Անշուշտ, հնարավոր էր, որ զոհաբերությունների ընթացքում լինեին աննշան բացթողումներ, սակայն Աստված պատրաստ է ընդունելու զոհը, եթե այն մատուցողն ունի մաքուր և անկեղծ նկատառումներ: Խույրի վրայի գրվածքը խորհրդանշում էր ժողովրդի անձնուրաց ցանկությունը՝ ամբողջությամբ նվիրվելու Տիրոջը: Ծառայության ընթացքում այն մշտապես պիտի լիներ քահանայապետի ճակատին ոչ միայն որպես իշխանության նշան, այլև՝ որ նա պատասխանատվության է ենթարկվելու ծիսական օրենքների և զոհաբերությունների ընթացքում թույլ տրված օրինազանցությունների համար:

Քահանայական զգեստներից յուրաքանչյուրն ուներ իր նշանակությունը: Դրանք հստակ նպատակաուղղված ազդեցություն ունեին մարդկային զանազան մեղքերի ու արատների դեմ: Այսպես, անդրավարտիքը կանխելու էր մարդու մեջ սեռական ոտնձգություն դրսևորելու հակումը: Շապիկը, որն ամբողջությամբ սպիտակ էր, ուղղված էր սպանություն կատարելու ցանկության դեմ. քահանաների դեպքում այն, բնականաբար, հարմար չէր սպանության համար, երկար էր և կարող էր միանգամից արյունոտվել. գիտակցորեն այս ամենը պիտի խանգարեր սպանություն գործելու մտադրությանը: Ապարոշը կամ քահանայապետի խույրը հպարտության մեղքի դեմ էր, իսկ գոտին իր հերթին առանձնացնում էր մարմնի վերին ու ստորին հատվածներն իրարից:

Այսպիսով՝ քահանայական 4 հիմնական զգեստները, հատկապես հասարակ մարդկանց պարագայում, կանխում էին հակումը դեպի վերոնշյալ արատները: Իսկ քահանայապետի դեպքում այս գործառույթներն ավելանում էին, քանի որ ավելանում էր զգեստների քանակը: Օրինակ՝ պատմուճանի գործառույթն ուղղված էր՝ կանխելու մարդու մեջ չարախոսության և բամբասանքի հակումը, որովհետև դրանից կախված զանգակներն անընդհատ հիշեցնում են, որ մարդիկ պետք է հետևեն իրենց յուրաքանչյուր խոսքին ու գործին: Հարց կարող է առաջանալ, թե ինչո՞ւ այս զգեստը չունի հասարակ քահանան: Հասարակ մարդկանց պարագայում չարախոսությունը ևս ունի որոշակի դրսևորումներ, բայց եթե խոսքը մեծանուն մեկի մասին է՝ հարուստի կամ իշխանավորի, ապա նրա չարախոսությունն ավելի վտանգավոր է և հասարակ ժողովրդի կողմից կարող է ընդօրինակվել ու ստանալ սովորույթի ուժ: Պետք է շեշտել, որ քահանայապետը սովորաբար առնչվում էր առավել բարձր դիրք ունեցող մարդկանց հետ:

Քահանայապետական հաջորդ զգեստը՝ եփուդը, առավել հետաքրքրական է, քանի որ սկզբնապես եղել է կռապաշտ քահանաների հագուստի հիմնական բաղադրիչ, որը կրել են կրծքավանդակի շրջանում, իսկ քահանայապետի դեպքում այն իջնում է ավելի ներքև՝ հակակշռելու համար հեթանոս քահանաներին: Ուստի, եփուդի գործառույթը կռապաշտության հակումը կանխելն է:

Քահանայապետի զգեստի բաղադրիչներից հաջորդը՝ խույրը, ինչպես արդեն նշվեց, ուղղված էր հպարտության մեղքի դեմ, որովհետև մարդն ինչ ստանում է իր կյանքում՝ յուրաքանչյուր հաջողություն կամ որևէ այլ լավ բան, Աստծուց պարգև է: Իսկ մեծանուն մարդիկ երբեմն հպարտանում են սեփական հաջողություններով՝ դրանց միակ պատճառ բերելով իրենց անձը, դիրքն ու կարողությունները:

Քահանայական ձեռնադրություն և օծում

Ձեռնադրության վերաբերյալ առաջին հրահանգներին հանդիպում ենք Ելք 28-րդ գլխում. *«Կօծես նրանց, կնվիրագործես նրանց ձեռքերն ու կսրբագործես նրանց, որպեսզի ինձ համար քահանայություն անեն» (28:41),* այնուհետև՝ 29-րդ և Ղևտ. 8—9-րդ գլուխներում: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ այս հրահանգները տրվում են Մովսեսին, այսինքն՝ թե՛ քահանաներին և թե՛ քահանայապետին պետք է *«օծեր», «օրհներ» և «սրբեր»* Մովսեսը՝ հատուկ սահմանված կարգով. *«Մովսեսը, վերցնելով օծության յուղից ու զոհասեղանի վրայի արյունից, ցանեց Ահարոնի ու նրա հանդերձանքի, նրա որդիների ու նրանց հանդերձանքների վրա և սրբագործեց Ահարոնին ու նրա հանդերձանքը, նրա հետ նաև նրա որդիներին ու նրանց հանդերձանքները» (Ղևտ. 8:30):*

Տեսնում ենք, որ այս կարգի կատարման համար անհրաժեշտ պայմաններ են օծելը, սրբելը և օրհնելը, որոնք այսօր էլ քրիստոնեական Եկեղեցում ձեռնադրության խորհրդի կատարման համար անհրաժեշտ պայմաններ են: Վերոնշյալ հատվածներում չկա բուն ձեռնադրության դրվագ, սակայն օծմամբ, օրհնությամբ և մաքրագործմամբ Ահարոնն ու իր որդիները դառնում են քահանաներ: Սուրբ Գրքում ձեռնադրության վերաբերյալ հատվածներ հանդիպում են Թվեր 27:18, Գործք 6:6, 8:17, 1 Տիմ. 4:14 և այլ տեղիներում:

Ահարոնի և նրա որդիների օծումից հետո Մովսեսը պատվիրում է նրանց. *«Վկայության խորանի դռնից յոթ օր դուրս չեք գա, մինչև ձեր նվիրագործման օրերի լրումը, որովհետև Տերը յոթ օրում պետք է սրբագործի ձեզ» (Ղևտ. 8:33):* Մովսեսը քահանաներին ուղղված իր խոսքում անընդհատ շեշտում է *«Այդպես է ինձ պատվիրել Տերը»* արտահայտությունը. հավանաբար քահանաների մեջ կար որոշակի դժգոհություն, ինչը երևում է Ղևտ. 8:36 համարից, որտեղ կարդում ենք. *«Ահարոնն ու նրա որդիներն արեցին»,* (եբրայերեն բնագրում *«արեցին»*-ի փոխարեն՝ *«արեց»),* այսինքն՝ Մովսեսի հրահանգները հոժարությամբ կատարեց միայն Ահարոնը. *«այն ամենը, ինչ որ Տերը պատվիրել էր Մովսեսին»:* Քահանաների մտածումն այս դեպքում ունի հետևյալ ձևակերպումը. *«Մենք ընտրվել ենք Աստծո կողմից և լավ գիտենք, թե ինչ է պետք անել»:* Ահա այս տրամաբանությամբ պետք է դիտարկել հետագայում Նադաբի և Աբիուդի մեղքը:

Նկատելի է, որ քահանաներն ինքնուրույն գործելու որոշակի հակում ունեն՝ առանց համապատասխանեցնելու և համաձայնեցնելու իրենց քայլերը Մովսեսի հետ: Բայց չէ՞ որ Օրենքն ստացել է Մովսեսը, ոչ թե նրանք: Հարց է առաջանում. քահանաները գործում են ըստ Օրենքի՞, թե՞ երբեմն օրենքից անկախ են, որովհետև պատմությունից հայտնի են շատ դեպքեր, երբ քահանաներն իրենք չէին պահում Օրենքը. *«Այդ ամբարիշտ ու չքահանայապետ Յասոնի ծայրահեղ մոլորության պատճառով այնպես եռանդագին սկիզբ դրվեց այլազգությանն ու հեթանոսությանը, որ այդուհետ քահանաներն անտեսում էին զոհասեղանի սպասավորությունն ու տաճարի ծառայությունը, արհամարհում ողջակեզի զոհաբերությունները և կոչնազանգի կանչելուն պես շտապում էին մասնակցել ըմբշամարտի մրցասպարեզում տեղի ունեցող անօրեն տեսարանին: Հայրերի պատիվն արհամարհում էին և անօրեն հեթանոսության փառքը գերադասում օրհնության փառքից» (2 Մակ. 4:13—15):*

Քահանաների մեջ ինքնուրույն գործելու հակումը կարող է բխել այն հանգամանքից, որ նրանք, ի սկզբանե լինելով Սրբարանի ծառայողներ, չէին ցանկանում իրենց առանձնացնել Մովսեսից, ինչն էլ հանգեցնում էր նմանատիպ դրսևորումների: Այդուհանդերձ, կարևոր է արձանագրել մեկ փաստ, Աստծո հետ հանդիպումը պետք է տեղի ունենա միջնորդի միջոցով, և միջնորդներն այս դեպքում հենց իրենք են՝ քահանաները:

Արմենակ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գագիկ սրկ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/ kristonya-hayastan
Ստորագրված է տպագրության 15.05.2025 թ.
Տպաքանակը՝ 1265